

## ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՋ *Թամարա Վարդանյան*

Ժամանակակից ազգայնականության տեսաբանները, քննարկելով նշված երեւոյթի նպատակները, շարժիչ ուժերը, տարբեր աշխարհագրական միջավայրերում եւ պատմական ժամանակաշրջաններում նրա դրսեւորման ձեւերը, հաճախ տալիս են նաեւ տարբեր դասակարգումներ՝ ըստ որդեգրած չափորոշիչների: Դասակարգումն, անկասկած, դյուրացնում է ոչ միայն խնդրի լուսաբանումը, ազգայնականության դրսեւորման հնարավոր ուղղվածության ու սոցիալական ընդգրկվածության շրջանակների կանխատեսումը, այլեւ ընդհանուր հայեցակարգի բացահայտումը:

Ըստ ազգայնականության հայտնի տեսաբան Է.Սմիթի՝ ազգայնականությունը լինում է երկու հիմնական տիպի՝ տարածքային եւ էթնիկ: Տարածքային ազգայնականությունը հիմնվում է քաղաքացիության հայեցակարգի վրա, իսկ էթնիկը՝ գենետիկ միասնության: Է.Սմիթն այս երկու տիպերը, իր հերթին, բաժանում է երկու ենթատիպերի, որոնք տարանջատվում են մինչանկախացման եւ հետանկախացման շրջաններին բնորոշ դրսեւորումներով: Այսպէս.

Տարածքային (կամ քաղաքացիական) ազգայնականության երկու ենթատիպերը՝

- ❖ մինչանկախացման շրջանի տարածքային ազգայնականությունը նպատակ ունի օտար նվաճողներին վտարել սեփական տարածքից, ստեղծել նոր ազգային պետություն: Այս ազգայնականությունը կրում է հակազաղութային բնույթ,

- ❖ հետանկախության շրջանի տարածքային ազգայնականության նպատակն է ստեղծել նոր «տարածքային ազգ»՝ նորաստեղծ պետականության սահմաններում: Սա ինտեգրացիոն ազգայնականություն է:

Էթնիկ ազգայնականության երկու ենթատիպերը՝

- ❖ մինչանկախացման շրջանի էթնիկ ազգայնականությունը հիմնված է էթնիկ եւ գենետիկ ընդհանրության հայեցակարգի վրա, նպատակ ունի անջատվել խոշոր քաղաքական միավորումից եւ սեփական տարածքում հիմնել նոր քաղաքական «էթնո-ազգ»:

- ❖ հետանկախության շրջանին բնորոշ էթնիկ ազգայնական շարժումների հիմքում նույնպէս ընկած է էթնիկ եւ գենետիկ ընդհանրության

հայեցակարգը, բայց այն նպատակ ունի արդեն գոյություն ունեցող պետական միավորման տարածքից դուրս ապրող իրեն ազգակից խմբերին ներառել իր կազմի մեջ՝ ստեղծելով մեկ հզոր ազգային պետություն: Այս ազգայնականությունը կոչվում է նաև համաազգայնականություն, օր.՝ համաթուրանականություն, համասլավոնականություն եւ այլն:

Միաժամանակ, քաղաքացիական (կամ տարածքային) եւ էթնիկ ազգայնականությունների մասին խոսելիս, Է.Սմիթը նշում է, որ իրենց դրսևորումներում «մաքուր» քաղաքացիական կամ «մաքուր» էթնիկ ազգայնականություն չկա, «ցանկացած ազգայնականություն ունի եւ քաղաքացիական, եւ էթնիկ տարրեր՝ տարբեր չափերով ու տարբեր ձևերով»:

Իսկ ազգայնականության տեսաբան Ջ.Բրեյլիի մոտ ազգայնականությունը դասակարգման է ենթարկվել՝ ելնելով պետականության հանդեպ այդ շարժման ունեցած դիրքորոշումից: Նա առանձնացնում է ազգայնականության երեք տիպ. անջատողական՝ ուղղված գոյություն ունեցող պետությունից անջատվելուն, բարեփոխական՝ ուղղված գոյություն ունեցող պետությանն ավելի ազգային բնույթ տալուն, միավորող (իռեդենտիկ)՝ ուղղված մի քանի պետությունների միավորմանը կամ որեւէ պետության մի մասի միավորմանն այլ պետությանը:

Ուսումնասիրողներից Մ.Յեչքերն առանձնացնում է ազգայնականության չորս տիպ.

1. Պետականաստեղծ ազգայնականություն (State-building nationalism), երբ պետությունը գիտակցաբար իրականացնում է մշակութային տարբեր տարածքների կամ հանրույթների ձուլման քաղաքականություն՝ միատարր պետականություն ստեղծելու նպատակով (որպես օրինակ կարելի է բերել «օսմանյան ազգի», «սովետական ժողովրդի» կամ «ամերիկյան ազգի» կերտման, թերեւս չհաջողված, գործընթացները):

2. Ծայրամասային (գավառական) ազգայնականություն (Peripheral nationalism): Այս տիպը ծայրամասերում ապրող մշակութային կամ այլ առանձնահատկություններ ունեցող հանրույթների կենտրոնից անջատվելու ձգտումն է՝ սեփական ինքնավարությունը կամ պետությունը ստեղծելու նպատակով (օրինակ, Քվեբեկը՝ Կանադայից, Կատալոնիան՝ Իսպանիայից, Շոտլանդիան՝ Անգլիայից, Աբխազիան եւ Հարավային Օսիան՝ Վրաստանից եւ այլն):

3. Իռեդենտիկ ազգայնականություն (Irredentist nationalism), երբ որեւէ պետություն ցանկանում է իր տարածքը մեծացնել ի հաշիվ իրեն սահմանակից պետության, որտեղ բնակվում են իր արյունակից էթնիկ

հանրույթները (օրինակ՝ Յուլիսային Իրանում բնակվող ադրբեջանցիները Ադրբեջանի համար, նախկին ԽՍՀՄ տարածքում ապրող թյուրքալեզու ազգությունները Թուրքիայի համար եւ այլն):

4. Միավորող ազգայնականություն (unification nationalism), երբ երկու քաղաքականորեն անջատ, բայց մշակութային տեսակետից իրար նման միավորներ ձգտում են քաղաքական միավորման մեկ պետականության սահմաններում (օրինակ՝ տրոհված գերմանական իշխանությունների միավորումը մեկ պետության սահմաններում՝ 1871թ., Իտալիայի միավորումը՝ 1860թ., ներկա փուլում ՀՀ եւ ԼՂՀ վերամիավորումը եւ այլն):

Փաստորեն, ուսումնասիրողների մոտ ազգայնականության դասակարգումը տարբերվում է դասակարգման համար որդեգրած չափորոշիչների բազմազանությամբ: Եթե Է.Սմիթն առաջնորդվում է ազգայնականության հայեցակարգային հիմքերով, Ջ.Բրեյլին՝ պետականության հանդեպ ունեցած դիրքորոշմամբ, ապա Մ.Յեչերը՝ շարժման նպատակներով: Այդուհանդերձ, մեթոդաբանական այս բազմազանությունը մեծապես հարստացնում է ազգայնականության տեսական ուսումնասիրությունը:

\* \* \*

Այժմ դիտարկենք ժամանակակից հայկական ազգայնականության ընդհանուր հայեցակարգը:

Ինչպես իրավացիորեն նշում է ժամանակակից ուսումնասիրողներից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր Վ.Ա. Շնիրելմանը, «հայերի մոտ ընդհանրության զգացումը կապվում է, առաջին հերթին, էթնիկ հիմքով միավորված ազգի գաղափարի հետ»:

Հայկական ազգայնականությունն առավելապես հիմնված է էթնիկության վրա, եւ հայության ներսում էթնիկ բաղադրիչներն ունեն ամուր հիմքեր: Ըստ Լ.Շանթի՝ հայ տեսակի ընդհանրական բաղադրիչներն են ծագումը, հայրենիքը, ֆիզիկական եւ հոգեկան կազմը, անցյալը, լեզուն, կրոնը, պետությունը, արվեստը, որոնցով ամբողջականանում է ազգը:

Ըստ Գ.Նժդեհի Ցեղակրոն ուսմունքի՝ «Ազգայնականության երկու ձեւերից - ազգայնական անհատապաշտություն եւ եսապաշտություն, ցեղակրոնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթե ոչ ազգ-անհատի արդար եւ արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը եւ պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը: Ցեղակրոնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի եւ առաջադիմության բարձր սկզբունքներին»: Փաստորեն, Ցեղակրոնությունը մերժում է ազգայնական

Եսասպաշտությունը՝ ազգայնամոլությունը, եւ ողջունում բնական, առողջ ազգայնականությունն՝ իբրեւ համամարդկային արժեք:

Միաժամանակ, հայկական ազգայնականությունն ունի նաեւ պետական (քաղաքացիական) ազգայնականության տարրեր, քանի որ պետականությունն ընկալվում է որպես էթնիկ տեսակի պահպանման եւ վերարտադրության լավագույն մոդել՝ ինչպես մինչանկախացման, այնպես էլ հետանկախության շրջանում: Բայց հայկական ազգայնականության հայեցակարգի պետական բաղադրիչն, անշուշտ, չի սահմանափակվում ներկայիս ՀՀ տարածքով, այլ ընդգրկում է ամբողջական հայրենիքը՝ ողջ Հայկական բարձրավանդակը:

Այսպիսով, ելնելով ազգայնականության վերը բերված ընդհանուր դասակարգումից, պետք է ասել, որ հայկական ազգայնականությունը չի սահմանափակվում մեկ կամ երկու բաղադրիչներով: Առավելապես լինելով էթնիկ՝ այն միաժամանակ ունի եւ տարածքային (որը պայմանավորված է բնական Հայրենիքի տարածքով), եւ պետական (պայմանավորված ազգային պետությունն իբրեւ արդյունավետ միջոց ունենալու հանգամանքով) բաղադրիչներ:

**ԱՐԽԱԶԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ  
Կարեն Վերանյան**

*Ս.թ. փետրվարի 16-ին արխագաբնակ հայ համայնքի իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ինչպես նաև արխագական հիմնախնդրի կարգավորմանն աջակցելու նպատակներով Սուխումում հիմնվեց «Համահայկական կոալիցիա»: Նորաստեղծ կոալիցիայի կազմում, ի թիվս Արխագիայի հայկական մի շարք մշակութային-բարեգործական կազմակերպությունների, ընդգրկված են նաև վիրահայության ներկայացուցիչները: Այս իրողությունը մեծապես պայմանավորված է հարավկովկասյան տարածաշրջանի հայկական սփյուռքին եւ, մասնավորապես, արխագահայությանը վերջին շրջանում նետված նոր մարտահրավերներով:*

Վերջին մեկ տարվա ընթացքում Արխագիայում հակահայկական դրսեւորումները կարծես սովորական են դարձել. վերջերս Սուխումի Հովհ. Թումանյանի անվան հայկական դպրոցում իրականացվեցին երկու պայթյուններ, հանրապետության ոստիկանության՝ ազգությամբ հայ շուրջ հարյուր աշխատակիցներ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից, Գագրա եւ Սուխում քաղաքներում ռուսաց լեզվով հակահայկական բովանդակությամբ թռուցիկներ տարածվեցին:

**Վրացական տարբերակ**

Արխագիայի հայության նկատմամբ այդ գործողությունները կարելի է պայմանավորել վրաց-արխագական հարաբերություններով: Խնդիրն այն է, որ արխագաբնակ հայությունը, որի ջերմ հարաբերություններն արխագ ժողովրդի հետ նոր երեւոյթ չեն, ժամանակ առ ժամանակ միջոց է ծառայում վրացական կողմի համար՝ Արխագիայում ազգամիջյան հակասությունները սրելու ուղղությամբ, որի նպատակն է խախտել երկրի ներքաղաքական կայունությունը եւ զիջումներ ակնկալել արխագական հակամարտության կարգավորումից: Ի դեպ, Արխագիայում հակահայկական դրսեւորումները տեղ են գտել դեռեւս 1990-ականների սկզբների վրաց-արխագական պատերազմի տարիներին, երբ վրացական

կողմը փորձում էր հարցը հանգուցալուծել Աբխազիայում ազգամիջյան պառակտումների սերմանման ճանապարհով:

Մյուս կողմից, հարցն անմիջականորեն վերաբերում է եւ հայ-վրացական հարաբերություններին: Վրաստանի իշխանությունները, շարունակելով Աբխազիան դիտարկել իրենց տարածքային կազմում, մտավախ են, որ այստեղ հայերի քաղաքական-հասարակական ցանկացած միավորում, ի թիվս ջավախահայության, կարող է հետագայում լուրջ խնդրի առջև կանգնեցնել Վրաստանի դեկավարությանը:

### **Թուրքական հետք**

Հայտնի է, որ Աբխազիայի քաղաքական-տնտեսական ու մշակութային կյանքում այսօր, ի հակակշիռ ռուսականի, զգալի ազդեցություն է ձեռք բերում թուրքական գործոնը: Այս տեսանկյունից, աբխազաբնակ հայության նկատմամբ վերջին զարգացումները կարելի է պայմանավորել նաեւ այդ հանգամանքով՝ երկու հիմնական պատճառով: Նախ՝ թուրքական կողմը, աբխազական զարգացումներում շահարկելով հայկական գործոնը, ձգտում է Աբխազիայում արհեստականորեն սերմանել ազգամիջյան հակասություններ, ինչը թույլ կտա չճանաչված հանրապետության քաղաքական-հասարակական կյանքում մեծացնել Անկարայի լծակները՝ ի հաշիվ ռուսական դիրքերի:

Միեւնույն ժամանակ, թուրքական կողմը հակահայկական քայլերի հրահրմամբ հետապնդում է Հարավային Կովկասի հայաթափման քաղաքականություն, ինչը հանդիսանում է Թուրքիայի ռազմավարության կարեւորագույն անկյունաքարերից մեկը: Հայտնի է, որ ռուսական կողմնակտիվ քաղաքականություն է վարում ՌԴ հարավային շրջաններին Աբխազիայի քաղաքական-տնտեսական ու մշակութային ինտեգրման ուղղությամբ՝ օգտագործելով նաեւ հայության գործոնը. ուստի Աբխազիայում տեղի ունեցած հակահայկական գործողությունները էապես կխթանեն տեղի հայության արտագաղթը դեպի ՌԴ հարավային շրջաններ, ինչն այսօր շահավետ է Թուրքիային:

Վերլուծաբաններից ոմանք գտնում են, որ այսօր աբխազաբնակ հայկական համայնքն աստիճանաբար վերածվում է Աբխազիայի ներքին ու արտաքին քաղաքականության կարեւոր գործոնի, որում վտանգ է տեսնում երկրի ներկայիս իշխանությունների համեմատաբար ազգայնական՝ նախագահական թելը: Այս առումով, հակահայկական գործողությունների իրացման գործում որոշակիորեն համընկնում են Աբխազիայի ու Թուրքիայի շահերը: Վերջինիս օգտին է խոսում նաեւ այն, որ այդ քայլով

աբխազական կողմը փորձում է երկրում պահպանել ռուս-թուրքական հավասարակշռությունը: Ավելին, երկրի նախագահական թեկնածուները և կարեւորվում աբխազաբնակ հայկական համայնքի նկատմամբ քաղաքական (հասարակական) վերահսկողության հաստատումը զաւիք խորհրդարանական ընտրությունների շեմին. չպետք է մոռանալ, որ Աբխազիայում կայացած վերջին նախագահական ընտրություններին, ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, տեղի հայության զգալի մասը միաձայն պաշտպանել է գործող նախագահի հակառակորդ Ռ.Խաջիմբայի թեկնածությունը:

### **Ռուսական սցենար**

Աբխազիայում արձանագրված հակահայկական միջադեպերն անհրաժեշտ է դիտարկել նաեւ ռուս-վրացական հարաբերությունների հարթությունում: Ավելին, վերլուծաբանների զգալի մասը հակված է այդ դեպքերը վերագրել ռուսական սցենարին՝ մի քանի հիմնական պատճառներով:

Նախ, ինչպես վերլուծաբաններից ոմանք են նկատում, ԱՄՆ եւ ԵՄ ճնշումների ներքո Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման, հակամարտությունների գոտում գործող ռուս խաղաղապահ առաքելության գործունեության դադարեցման հարցերի բարձրացումը կարող է հակադարձ էֆեկտ ունենալ: Այս տեսանկյունից, Աբխազիայում տիրապետելով զգալի ռեսուրսների՝ Ռուսաստանը կարող է վրացական կողմի վրա ճնշումներ բանեցնելու համար խաղարկել այդ թվում եւ աբխազաբնակ հայության գործունը՝ վրաց-աբխազական հարաբերություններում ընդհանուր լարվածության հրահրման նպատակով:

Աբխազիայում հակահայկական դրսեւորումների հրահրմամբ ռուսական կողմը կարող է հետապնդել նաեւ այլ քաղաքականություն: Ներկայումս ռուս-վրացական հարաբերությունները բավական լարված են՝ ժամանակ առ ժամանակ ուղեկցվելով քաղաքական ու դիվանագիտական բացահայտ առճակատումներով: Այս պայմաններում բավական խնդրահարույց է դարձել Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքում ռուսական ազդեցության տարածման հարցը: Այս առումով, ռուսական կողմը ձգտում է ազդեցություն ապահովել մասնավորապես վիրահայության հասարակական-քաղաքական շրջանակներում, որոնք բավական դժգոհ լինելով ազգային փոքրամասնությունների հարցում երկրի իշխանությունների քաղաքականությունից՝ կարող են հեշտությամբ համագործակցման եզրեր գտնել արտաքին ուժերի՝ տվյալ պարագայում

ռուսական կողմի հետ: Ուստի տրամաբանությունից զուրկ չէ այն վարկածը, ըստ որի՝ Աբխազիայում վերջերս արձանագրված հակահայկական գործողությունները հետեւանք էին ռուսական հատուկ ծառայությունների լավ մշակված սցենարի, որի նպատակն էր Աբխազիայի հայկական կազմակերպությունների միավորումը եւ համագործակցության հաստատումը վիրահայության համապատասխան հասարակական-քաղաքական ինստիտուտների հետ:

Միեւնույն ժամանակ, բավական խորհրդանշական է, որ աբխազական զարգացումներին զուգընթաց, հասարակական-քաղաքական նոր տեղաշարժեր են ընթանում նաեւ Հարավային Օսիայի հայկական համայնքի ներսում. մասնավորապես, 2004թ. կեսերին Հարավային Օսիայում հիմնադրված «Արարատ» հայկական ընկերությունը փորձում է ամրապնդել կապերը Հայաստանի եւ տարածաշրջանի հայկական սփյուռքի՝ հատկապես վիրահայության եւ աբխազաբնակ հայության հետ: Հասկանալի է, որ այս ամենը չի կարող արվել առանց ռուսական կողմի անմիջական մասնակցության:

Մյուս կողմից, աբխազաբնակ հայության հասարակական-քաղաքական միավորման հարցը ռուսական կողմը դիտում է նաեւ Աբխազիայի ներքաղաքական զարգացումների համատեքստում: Մասնավորապես, 2007թ. Աբխազիայում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ, որոնց նախապատրաստական աշխատանքներն ու հետագա արդյունքները ռազմավարական նշանակություն ունեն ռուսական կողմի համար: Այս տեսանկյունից, բավական տրամաբանված է տեղի հայկական համայնքում ռուսական քաղաքական (հասարակական) ազդեցության ընդլայնման հարցը, իսկ այն, որ տեղի հայությունը եւ առավել եւս նրա միավորումը կարող է լուրջ ռեսուրս լինել խորհրդարանական ընտրություններում, կասկած չի հարուցում:

Աբխազիայի հայության շրջանում Ռուսաստանի վարած քաղաքականության ընդհանուր տրամաբանության ներքո պետք է դիտարկել երկու խորհրդանշական հանգամանք եւս. նախ՝ Աբխազիայի հայության հոգեւոր առաջնորդը նշանակվում է Հայ Առաքելական եկեղեցու՝ հարավուսաստանյան թեմի ղեկավարության անմիջական համաձայնությամբ ու ներկայացմամբ: Եվ երկրորդ՝ 2004թ. կեսերից եւ, մասնավորապես, «Աբխազիայի հայկական համայնք» կազմակերպության հիմնադրումից ի վեր Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի շրջանային վարչությունն ակտիվ աշխատանքներ է իրականացնում սույն կազմակերպության հետ՝ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է հարցը քննարկել բացառապես



ռուս-աբխազական հարաբերությունների համատեքստում: Թեև Աբխազիայի նախագահական ընտրություններին Սերգեյ Բազապշի հաղթանակով էական փոփոխություններ չեն արձանագրվել ռուս-աբխազական հարաբերություններում, այնուհանդերձ, կողմերի միջև համագործակցությունը երկուստեք ստացել է որոշակի նոր տրամաբանություն, ինչի արդյունքում երկկողմ հարաբերություններում գոյացած հակասությունները, Աբխազիայի նախորդ իշխանությունների համեմատ, որոշակիորեն զարգացել են: Ավելին, երկրի ներկայիս ղեկավարության օրոք դրական նոր լիցք են ստանում, մասնավորապես, թուրք-աբխազական հարաբերությունները, ինչը, մեղմ ասած, շահավետ չէ ռուսական կողմին: Այս առումով, թերևս, տրամաբանված է այն վարկածը, որ հակահայկական գործողությունների հրահրմամբ ռուսական կողմը, որպես ճնշամիջոց, փորձեց վերահսկելի անկայունություն առաջ բերել Աբխազիայի ներքաղաքական-հասարակական դաշտում՝ սեփական դիրքերն ամրապնդելու նպատակով:

### **Եզրահանգումներ**

Վերջերս Աբխազիայում արձանագրված հակահայկական միջադեպերը, ինչպես նաև վիրահայության, Աբխազիայի ու Հարավային Օսիայի հայության հասարակական-քաղաքական միավորման գործընթացները վկայում են Հարավային Կովկասում գոյացած աշխարհաքաղաքական շահերի բեւեռացման ու կարծրացման մասին, որտեղ, ի թիվս այլ հարցերի, կիզակետում է հայտնվել նաև տարածաշրջանի հայկական սփյուռքը՝ դառնալով աշխարհաքաղաքական կարեւոր գործոն:

Անշուշտ, տարածաշրջանում հայկական գործոնի կարեւորության մեծացումը լուրջ ռեսուրս է Հայաստանի տարածաշրջանային հիմնախնդիրների կարգավորման առումով: Մյուս կողմից, սակայն, հայության գործոնը, դառնալով արտաքին կենտրոնների խաղաթուղթ, բացասաբար կարող է անդրադառնալ, առաջին հերթին, ՀՀ շահերի վրա: Այս տեսանկյունից, կարեւոր նշանակություն են ձեռք բերում Հարավային Կովկասի հայության շուրջ ձեւավորվող զարգացումներին հայաստանյան կողմի խելամիտ մասնակցության, առհասարակ սփյուռքի գործոնի վերաիմաստավորման եւ նրա շահերի պաշտպանման հիմնահարցերը:

## **«ՈՒՂԵՂԱՅԻՆ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ** **Գազիկ Տեր-Չարությունյան**

Տեղեկատվական դաշտում հաճախ են հոլովվում «մտքերի ֆարրիկա», «վերլուծական» կամ «ուղեղային» կենտրոն (ՈւԿ) հասկացությունները: Հաճախ որպես ՈւԿ ընկալվում են զուտ քաղաքական կամ տնտեսական վերլուծությամբ զբաղվող կառույցները: Մինչդեռ իրականում ՈւԿ-ներն ուսումնասիրում եւ լուծումներ են առաջարկում մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած կենցաղային մանր թվացող հարցերից, վերջացրած աերոկոսմիկ հետազոտություններով եւ գլոբալ ռազմավարության հայեցակարգերի մշակումով: Նման կենտրոնների ծառայություններից օգտվում են գրեթե բոլոր երկրների կառավարական կառույցները եւ քիչ թե շատ խոշոր մասնավոր ընկերությունները: Նրանք, ովքեր տիրապետում են անհրաժեշտ նյութական եւ ինտելեկտուալ ռեսուրսների, ձգտում են ձեւավորել իրենց շահերը սպասարկող սեփական ՈւԿ-ներ:

ՈւԿ-ների թվի բազմացումը եւ ժամանակակից գլոբալացման գործընթացներում դրանց դերակատարման մեծացումը պայմանավորված են ներկայիս ինֆորմացիոն դարաշրջանով եւ ինֆորմացիոն հասարակության ձեւավորմամբ: Իր հերթին, ՈւԿ-ների գործունեությունը զգալիորեն նպաստում է նման հասարակության կայացմանը: Այս համատեքստում ՈւԿ-ների պահանջվածությունը ցուցանիչ է հանդիսանում, թե որքանով են այս կամ այն երկրի իշխանությունները եւ հանրությունը համապատասխանում տեղեկատվական հասարակության բովանդակությանը, որի տակ, համաձայն դասական ձեւակերպումների, հասկանում են տվյալ հանրության ընդհանրական գիտելիքների չափը:

ՈւԿ-ների պատմությունն ուսումնասիրող գրականությունում ընդունված է համարել, թե պետություն–ՈւԿ հարաբերությունների հիմքը դրվել է 1832թ., երբ ԱՄՆ ֆինանսների նախարարը դիմել է Ֆիլադելֆիայում գտնվող Ֆրանկլինի ինստիտուտին՝ առաջարկելով հետազոտել եւ պարզել ամերիկյան շոգենավերում կաթսաների հաճախակի դարձած պայթյունների պատճառները. գիտնականները կարողացան լուծել խնդիրը: Այդ հաջողված փորձից հետո ամերիկյան կառավարության համագործակցությունը գիտական կենտրոնների հետ ընդունեց մշտական, անընդհատ զարգացող եւ ընդլայնվող բնույթ:

Անշուշտ, պետություն-գիտություն հարաբերությունների կայացման մասին վերոհիշյալ շարադրանքը պատմության ամերիկակենտրոն մեկնաբանության արգասիք է. նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել այլ ժողովուրդների պատմությունից եւս (բավական է հիշել Արքիմեդի արդյունավետ համագործակցությունը Սիրակուզայի իշխանությունների հետ ռազմական-պաշտպանական խնդիրներում):

Միեւնույն ժամանակ պետք է ընդունել, որ Միացյալ Նահանգներն այն տերությունն է, որը, թերեւս, լավագույնն է ըմբռնել գիտելիքների կարելուրությունը եւ այն օգուտները, որ կարելի է ստանալ գիտական հետազոտությունները գործնական կյանքում ներդնելու արդյունքում: Չափազանցություն չի լինի, եթե պնդենք, որ այդ գերտերության հզորությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն բարձր կարգավիճակով, որ ունի գիտական-ստեղծագործական գործունեության ոլորտը ամերիկյան հանրությունում: Այս համատեքստում չպետք է մոռացության մատնվի նաեւ ԽՍՀՄ փորձը, որը ժամանակին տիրապետում էր հսկայական գիտական ներուժի եւ ավելի քան հաջող մրցակցում էր ԱՄՆ-ի հետ: Փորձագետների կարծիքով՝ կրթության, հիմնարար գիտությունների եւ տեխնոլոգիական մշակումների մի շարք ոլորտներում այդ գերտերությունն անգամ գերազանցում էր մրցակցին (հիշենք առաջին արհեստական արբանյակները եւ տիեզերագնացների թռիչքները):

Սակայն խորհրդային ղեկավարությունն առանձնապես չէր կարելուրում հասարակագիտական եւ ընդհանրապես մարդկային գործոնի հետ կապված գիտությունները: Այդ բնագավառում շեշտը դրվել էր զուտ գաղափարախոսական, կամ եթե ավելի ճշգրիտ՝ կաղապարված կուսակցական մոտեցումների վրա, եւ որեւէ շեղում այդ գծից գրեթե անհնարին էր: Նման դրվածքի հետեւանքով հասարակագիտական ոլորտը եւ դրա հետ կապված խնդիրների ողջ համախումբը հայտնվել էին փակուղային վիճակում: Այդ հանգամանքը պետք է համարել խորհրդային գերտերության կազմալուծման հիմնական պատճառներից մեկը:

Իրադրությունն էապես այլ էր Արեւմուտքում եւ հատկապես ԱՄՆ-ում, որտեղ քաղաքականության, հասարակագիտության խնդիրներին ու, այսպես կոչված, «մարդկային» գործոնին նախկինում եւ այսօր առաջնահերթ տեղ է հատկացվում: Բավական է նշել, որ այդ բնագավառներում Միացյալ Նահանգներում գործում են մոտ 2000 ՈւԿ, որոնց մի մասն արդեն հարուստ պատմություն եւ ավանդույթներ ունի: Քարտեզի միջազգային խաղաղության հիմնադրամը, օրինակ, ստեղծվել էր դեռեւս 1910թ.՝ «պատերազմների պատճառները եւ հակամարտությունների հնարավոր կարգավորումները» հետազոտելու նպատակով: Մեկ

այլ հանրահայտ կենտրոն՝ Բրուկլինգսի ինստիտուտը, հիմնվել է 1916թ. (սկզբնական շրջանում այն կոչվում էր Պետական հետազոտությունների ինստիտուտ եւ իր ներկայիս անվանումը ստացել է 1927-ին): Ուկ-ներն առանձնահատուկ կարեւորություն ձեռք բերեցին Առաջին համաշխարհային պատերազմի եւ դրան հաջորդած տարիներին: Մասնավորապես, 1921թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ձեւավորեց քաղաքագետներից կազմված մի խումբ, որը բանկիրների, ձեռնարկատերերի եւ իրավաբանների հետ համատեղ խորհրդատվական ծառայություններ էր մատուցում ամերիկյան պատվիրակությանը: Աշխատանքային այդ խումբը ստացավ «Հետազոտություն» անվանումը, եւ հետագայում հենց այդ միջավայրից գոյացավ հանրահայտ Միջազգային հարաբերությունների խորհուրդը (ՄՀԽ), որն ամերիկյան քաղաքականության ուղենիշների ձեւավորողներից է առայսօր:

Հատկանշական է, որ պատերազմները խթանել եւ խթանում են Ուկ-ների գործունեությունը: Ուկ-ների ստեղծման հաջորդ ալիքը պայմանավորվեց Երկրորդ աշխարհամարտով: Այդ տարիներին վերոհիշյալ ՄՀԽ-ն նախաձեռնեց մի մեծ նախագծի իրականացում, որի անվանումն էր «Պատերազմի եւ խաղաղության հիմնախնդիրների ուսումնասիրություն»: Նախագծի նպատակն էր մշակել հետպատերազմյան կարգավորման սցենարները, առաջարկել ԱՄՆ-ի համար այն ցանկալի սկզբունքները, որոնցով պետք է ձեւավորվեր նոր աշխարհակարգը: Նախագծի շրջանակներում, մասնավորապես, կազմվեցին մոտ 700 հուշագրեր Պետական դեպարտամենտի համար, որոնք գործնական առաջարկներ էին, օրինակ, Գերմանիայի օկուպացման, հետպատերազմյան Եվրոպայի վերականգնման եւ ՄԱԿ ստեղծման վերաբերյալ: Պատերազմից երկու տարի հետո ՄՀԽ-ի կողմից հրատարակվող «Արտաքին քաղաքականություն» ամսագրում լույս տեսավ Ջորջ Քենանի «Խորհրդային (սովետական) վարքագծի ակունքները» խորագրով հոդվածը, որտեղ ներկայացված մոտեցումները հիմք հանդիսացան սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից կիրառվող «զսպման քաղաքականություն» կոչվող ռազմավարության համար: Բնորոշ է, որ սառը պատերազմի ավարտից հետո՝ 1993-ին, նույն ամսագրում տպվեց Սամուել Հանտինգտոնի «Քաղաքակրթությունների բախում» հոդվածը, որն ԱՄՆ ժամանակակից գլոբալ ռազմավարության գաղափարական հենքն է:

Խոսելով Երկրորդ համաշխարհայինից հետո ԱՄՆ-ում հիմնված, այսպես կոչված, «Երկրորդ սերնդի» Ուկ-ների մասին՝ անհնարին է շրջանցել հանրահայտ ՌԵՆԴ (անգլերեն research and development -

հետազոտությունն էլ մշակում բառերի հապավումն է) կորպորացիան: Այն ստեղծվեց 1948թ., երբ ԱՄՆ ցամաքային ուժերի ռազմաօդային հրամանատարությունը որոշեց «Դուզլաս» ավիաընկերության շրջանակներում ստեղծել մի կազմակերպություն, որը պետք է իրագործեր «վերլուծությունների եւ հետազոտությունների» մի ծրագիր՝ կապված «միջմայրցամաքային ռազմական գործողությունների հետ»: Հատկանշական է, որ 1948թ. կնքված պայմանագրի այս առանցքային բառերն առայսօր գրեթե չեն փոխվել եւ պահպանվում են ՌԵՆԴ-ի ու ռազմաօդային ուժերի միջեւ ներկայումս կնքվող համաձայնագրերում: Աշխատանքային պայմանագրում նման ոչ կոնկրետ ձեւակերպումը նպատակ ունի չկաշկանդել ՌԵՆԴ-ի վերլուծաբանների երեւակայությունը եւ հնարավորություն է ընձեռում նրանց ազատ արտահայտել իրենց մտքերը եւ առաջարկվող վարկածներն ու սցենարները:

ՌԵՆԴ-ի առաջին իսկ մշակումները խիստ արդյունավետ էին եւ դրական արձագանք ստացան ամերիկյան քաղաքական ու զինվորական ընտրանու կողմից: Իր հիմնման արդեն երկրորդ տարում այդ ՈւԿ-ն դուրս եկավ «Դուզլաս»-ի կազմից եւ ինքնուրույն կարգավիճակ ձեռք բերեց: Ներկայումս ՌԵՆԴ-ն ունի բազմաթիվ մասնաճյուղեր, նրա բյուջեն հասնում է տասնյակ միլիոնների, իսկ անձնակազմը ներառում է հազարավոր փորձագետների: ՌԵՆԴ-ում մշակվում են ամենազանազան նախագծեր, որոնց զգալի մասը վերաբերում է ռազմաքաղաքական ոլորտին: Օրինակ, Քենանի առաջարկած «զսպման քաղաքականությունը» մանրակրկիտ մշակվեց հենց ՌԵՆԴ-ի մասնագետների կողմից եւ, փաստորեն, դարձավ գործնական ձեռնարկ ամերիկյան իշխանությունների համար:

ՌԵՆԴ-ը հատուկ ուշադրություն է դարձնում տեղեկատվական տեխնոլոգիաներին, եւ նրա փորձագետներն են, որ շրջանառության մեջ են մտցրել ու բովանդակություն հաղորդել այսօր արդեն սովորական դարձած տեղեկատվական գործողությունն էլ տեղեկատվական պատերազմներ հասկացություններին: Իր գործունեության ընթացքում ՌԵՆԴ-ը կազմել է տասնյակ հազարավոր հուշագրեր, զեկուցագրեր, հաշվետվություններ եւ այլ «թղթային» արտադրանք, որոնք, համաձայն փորձագետների կարծիքի, սկզբունքորեն փոխել եւ լայնացրել են ամերիկյան ընտրանու մտածելակերպը եւ աշխարհայացքը:

Ինչպես արդեն մշել ենք, պատերազմները եւ ընդհանրապես արտակարգ իրավիճակները խթանել են նոր ՈւԿ-ների ստեղծումը եւ եղածների դերակատարման մեծացումը: Այս առումով բացառություն չի կազմում նաեւ այն «հակասահաբեկչական» պատերազմը, որը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո վարում է Միացյալ Նահանգները: Ամերիկյան

հակահարեկչական ռազմավարության մշակողների թվում են Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնը, Նիքսոնի կենտրոնը, Ամերիկյան ձեռնարկատիրության ինստիտուտը (AEI), Ժառանգություն (Heritage) հիմնադրամը. վերջին երկուսին են, մասնավորապես, վերագրվում Իրաքի գրավման ռազմական, տնտեսական եւ գաղափարական հիմնավորումները: Նկատենք նաեւ, որ Heritage-ը եւ AEI-ն ավանդաբար սպասարկում են ԱՄՆ Հանրապետական կուսակցությանը, մշակում, զարգացնում են պահպանողական եւ նեոպահպանողական գաղափարախոսության դրույթները:

ՈւԿ-ների ստեղծման ամերիկյան փորձն այսօր ձգտում են կիրառել նաեւ այլ երկրներում: Մասնավորապես, վերջին 20-25 տարում ԱՄՆ-ից դուրս 3 000-ից ավելի ՈւԿ-ներ են ստեղծվել: Սակայն այս հարցում ծագել են խնդիրներ, որոնք կարիք ունեն առանձին քննարկման: Նկատվում է միտում, որ հատկապես տնտեսապես ոչ այնքան բարվոք երկրներում հիմնադրվում են ՈւԿ-ներ, որոնց գործունեությունը գլխավորապես պայմանավորված է օտարերկրյա ներդրումներով կամ դրամաշնորհներով: Երբեմն այդ դրամաշնորհները տալիս են, մասնավորապես, նույն ամերիկյան ՈւԿ-ները: Բնական է նաեւ, որ նման աջակցություն ցուցաբերող կազմակերպությունները, որպես կանոն, պետք է հետապնդեն սեփական հետաքրքրությունները եւ շահերը:

Անշուշտ, հնարավոր է, որ դրամաշնորհ ստացողի եւ տվողի շահերը համընկնեն, եւ այս դեպքում նրանց համագործակցությունը խիստ արդյունավետ է: Բացի դրանից, կան նաեւ համամարդկային խնդիրներ, որոնց շուրջ համախմբվում են տարբեր երկրների հետազոտողներ: Սակայն անգամ թռուցիկ դիտարկումները ցույց են տալիս, որ նման նորաստեղծ ՈւԿ-ների օտարերկրյա պատվերով կատարվող աշխատանքները միշտ չէ, որ բխում են սեփական երկրի շահերից: Այսինքն՝ մտավոր ռեսուրսները պետք է ֆինանսավորվեն պետության կողմից, քանի որ այլ պարագաներում դրանք կարող են աշխատել ուրիշ երկրների շահերի համար:

## ԿՐԹԱՅԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՈՒՄ Դավիթ Յովհաննիսյան

Ժամանակակից քաղաքակրթությունն իր նախորդներից հատկապես առանձնանում է ադապտացման խնդիրների աննախադեպ բարդացմամբ: Այսօրվա աշխարհի մասին ամբողջական պատկերացում ունենալու, տեղի ունեցող գործընթացներն ընկալելու եւ հետագան կանխատեսելու, մարդկային հանրության մեջ կողմնորոշվելու, ընդհանրական աշխարհայացք ձեւավորելու համար ներկայումս անհրաժեշտ է զգալիորեն ավելի շատ ինֆորմացիա, քան նախկինում:

Միաժամանակ, ինֆորմացիայի ընդհանուր քանակը ներկայումս աճել է (եւ շարունակում է աճել ավելի արագացող տեմպերով) այն աստիճան, որ առանձին մարդու գիտակցությունն ի վիճակի չէ այն ընկալել: Ավելին, առանձին մարդու գիտակցությունը չի կարող ընկալել նաեւ իր նեղ մասնագիտական ոլորտում կուտակված եւ օրեցօր ավելացող ինֆորմացիայի ամբողջ գումարը, ինչը բոլորովին նոր երեւույթ է՝ համեմատած նույնիսկ 30-40 տարի առաջ գոյություն ունեցող իրավիճակի հետ:

Այս իրավիճակն ավելի է բարդանում նրանով, որ հետմոդեռնիստական մշակութային դաշտը ենթադրում է այդ դաշտում հայտնվող բոլոր տարրերի բացարձակ հավասարություն, ինչը նշանակում է, որ արդեն գոյություն չունեն բացարձակ հեղինակություններ, որոնք խանգարում են մյուս տարրերին ինչ-որ կերպ կամ լիարժեք դրսեւորվելու: Ինտերնետում բոլորը հավասար են եւ հասանելի: Համաշխարհային սարդոստայնը, չկրկնելով աշխարհի պատկերը եւ չվերածվելով իր մեջ պարունակվող անվանումների յուրատեսակ աշխարհագրական քարտեզի, ստեղծում է «աշխարհապատկեր», որը ստեղծում է նոր տարածություն նոր՝ վիրտուալ տիպի կյանքի համար:

Այս նոր իրավիճակն առաջ է բերում բազմաթիվ հիմնահարցեր, որոնք բնութագրվում են որպես «անձի՝ հետմոդեռնիզմի ժամանակաշրջանի ինֆորմացիոն ցնցում»:

Ինչպե՞ս կարելի է շտկել իրավիճակը, ի՞նչ միջոցներ պետք է օգտագործվեն աշխարհընկալման միասնականությունն ապահովելու, անձին ինֆորմացիոն ցնցումների ազդեցությունից զերծ պահելու համար:

Մարդկության պատմության ընթացքում մի քանի անգամ տեղի են ունեցել ինֆորմացիոն հեղափոխություններ:

Դրանցից առաջինը, անշուշտ, կապված է լեզվահամակարգի ստեղծման հետ, սակայն հասկանալի է, որ այդ դարաշրջանի մասին մենք բավարար չափով տեղեկություններ չունենք:

Երկրորդ ինֆորմացիոն հեղափոխությունը տեղի է ունեցել գրահամակարգի ստեղծման արդյունքում, երբ մարդկային խմբերն ինֆորմացիայի բանավոր հաղորդման համակարգից անցել են գրավոր համակարգին: Այս հեղաշրջումն անմիջապես հանգեցրեց նաեւ կրթական ոլորտի որակական փոփոխմանը:

Նախագրային շրջանում կրթության նպատակն էր կազմակերպել նախնյաց իմաստության, փորձի հաղորդումը մի սերնդից մյուսին, ինչը հնարավորություն էր տալիս վերարտադրել հանրույթը նույն հիմքի վրա՝ պահպանելով անհրաժեշտ գիտելիքը, որը թույլ էր տալիս կանոնակարգել համայնքի կյանքը եւ միջհամայնքային հարաբերությունները: Դեռ չկար գիտություն, կար միայն գիտելիք, որը պարունակվում էր երկու տիպի տեքստերում՝ *դիցաբանական*, որը համակարգված ձեւով ներկայացնում էր աշխարհի, բնության եւ հասարակության կյանքի հիմնական նորմերն ու կրկնվող, ցիկլիկ իրադարձությունների հիմնավորումը, եւ *ավանդապատումային*, որի միջոցով տվյալ մարդկային հանրույթը «տեղադրվում» էր այդ նորմերի մեջ: Համայնքի նոր սերունդը սովորում էր նայելով, հիշելով, կրկնելով եւ կրկնօրինակելով: Ընկալելով կուլեկտիվ հիշողության մեջ պահպանվող գիտելիքի անհրաժեշտ մասը, այսինքն՝ այն մասը, որը թույլ էր տալիս նոր սերնդին անվտանգ ձեւով ադապտացվել շրջապատող աշխարհին, նրանք ծիսական փորձություններ էին անցնում եւ ճանաչվում համայնքի լիարժեք անդամներ:

Կար նաեւ գիտելիք, որն ուներ գաղտնի բնույթ եւ որը խստորեն պահվում էր քրմերի, շամանների, գուշակների, «իմաստունների» չափազանց նեղ շրջանակում: Այս գիտելիքից հետագայում սկսում է ձեւավորվել գիտությունը:

Եթե փորձենք համակարգել վերը ներկայացվածը, ապա կստացվի հետեւյալ կադապարը. հանրույթի հիմնական կրթական խնդիրն է ձեւավորել իր աճող սերնդի գիտակցությունն այնպես, որ այն ի վիճակի լինի լուծել երկու հիմնական խնդիր՝ ա) հեշտ ադապտացվի միջավայրին, բ) պահպանի եւ հաղորդի իրենից հետո եկող սերնդին իրեն հանձնված գիտելիքը: Առկա է կուտակված փորձը, որը պետք է այնպես հաղորդվի, որ այն հնարավոր լինի ճիշտ հիշել եւ օգտագործել: Պետք չէ խնդիրներ լուծել, անհրաժեշտ է միայն ճիշտ կրկնել այն, ինչ արդեն արել են նախնիները:



Հասկանալի է, որ այս կրթական համակարգի հիմքում ընկած է սովորեցնողի, ավելի ճիշտ՝ վարժեցնողի անձնական օրինակը:

Ինֆորմացիայի գրավոր հաղորդման համակարգը հիմնովին փոխում է կրթական համակարգի էությունն ու բովանդակությունը, քանի որ փոխվում է կրթության նպատակը: Առաջ է գալիս կրթական գործընթացի մի նոր կարեւոր տարր՝ գիրքը, որը թույլ է տալիս հաղթահարել մարդկային հիշողության սահմանները եւ կտրուկ կերպով մեծացնել պահվող եւ մշակվող ինֆորմացիայի ծավալը: Այս շրջանը համընկնում է պետությունների ձեւավորման հետ, ինչն ինքնընտանիքային հանգեցնում է գիտությունների առաջացման, ինչպես նաեւ ինֆորմացիոն զանգվածի՝ ըստ գիտական ոլորտների դասակարգման:

Այս ժամանակաշրջանում գիտությունների թիվը դեռեւս խիստ սահմանափակ է, նրանք դուրս չեն գալիս գիտելիքի կրողների նեղ շրջանակից, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ պահպանվում է նրանց գաղտնիությունը, ինչին նպաստում է տարբեր տիպի փակ կազմակերպությունների ստեղծումը՝ սկսած համքարություններից եւ վերջացրած սուֆիական, ասպետական միաբանություններով:

Սակայն հասարակությունն իր անդամների ադապտացման խնդիրը լուծելու համար առաջ է քաշում մի շարք պահանջներ, որոնց բավարարման խնդիրը լուծում է նոր տեսք ընդունած կրթական համակարգը: Այն դառնում է *երկաստիճան*:

Առաջին աստիճանը տալիս է այն նվազագույն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են տվյալ հասարակության անդամ դառնալու համար: Եկեղեցական դպրոցներում, մուսուլմանական քուրթաբներում երեխաները ստանում են աշխարհի եւ Աստծո մասին այն գիտելիքները, որոնք թույլ են տալիս նրանց մասնակցել հասարակական ծեսերին եւ գիտակցել պետության մեջ գործող օրենքը:

Ստեղծվում է «կիրթ մարդ» հասկացությունը (արաբամուսուլմանական միջնադարյան մշակույթում՝ ադիբ), որը պետք է իմանար այն ամենը, ինչն իրեն թույլ կտար լինել հասարակության օրինակելի անդամ: Միջնադարյան Եվրոպայում մշակվում էին հատուկ կրթական համալիրներ. յոթ գիտություններից բաղկացած սեպտենարիումը, իր հերթին, կազմված էր տրիվիումից եւ կվադրիվիումից, որոնց իմացությունն անհրաժեշտ էր կիրթ մարդ լինելու համար: Գիտությունների նման համալիրներ կային նաեւ մուսուլմանական աշխարհում, որոնց իմացությունը բարձր պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն էր տալիս: Այս գիտությունների դասավանդումը հանդիսանում էր կրթական երկրորդ աստիճանի բովանդակությունը:

Հիերարխիկ հասարակությունը ստեղծում է հիերարխիկ կրթական համակարգ, որն իր ներքին էությանը համապատասխանում է իր կողմից ուսուցանվող աշխարհայեցողության էությանը՝ այն ունիվերսալ է, հիերարխիկ եւ խորհրդանշական:

Ուսուցչի դերը թեեւ մնում է կարելու, սակայն զիջում է իր դիրքերը գրքին, որից ուղղակիորեն հնարավոր է քաղել անհրաժեշտ գիտելիքը, իսկ դա այն գիտելիքն է, որը թույլ է տալիս համատեղել Աստծո հավերժական էությունը մարդու եւ աշխարհի անցողիկ, ժամանակավոր բնույթի հետ: Հասկանալի է, որ ադապտացիոն խնդիրն այս պայմաններում փոփոխվում է, ուստի, եթե փորձենք առաջարկել այն կադապարը, որի հիման վրա գործում էր այդ ժամանակաշրջանի կրթական համակարգը, ապա կստանանք հետեւյալը. հանրույթը ձգտում է լուծել իր նոր սերնդի ադապտացման խնդիրները՝ ձեւավորելով վերջինիս գիտակցությունն այնպես, որ այն ընդունի ոչ միայն շրջապատող միջավայրի կայուն, մնայուն դրսեւորումները, այլ նաեւ պայմանների հնարավոր փոփոխությունները, որոնք այն պետք է իր մտածողության միջոցով մշակի եւ ադապտացնի արդեն գոյություն ունեցող աշխարհայեցողության համակարգին: Ուսուցիչը եւ գիրքը հաղորդում են արդեն ոչ միայն փորձը եւ գիտելիքը հնի մասին, այլ նաեւ տալիս են նորը եւ այդ նորի իմաստավորումը: Կրթական համակարգն անվանում է օբյեկտները եւ հնարավորություն է տալիս սուբյեկտին՝ դրանք ուսումնասիրել: Այն խիստ հիերարխիկ է, սակայն գիտելիք կրողների շրջանակն ընդլայնվել է. դրանք միայն քրմերն ու շամանները չեն այլեւս. գիտելիք է համարվում արդեն ոչ միայն էզոթերիկան (օրինակ՝ եգիպտական քրմերը որպես աստվածային գիտելիք պահպանում էին իրիգացիոն խողովակների կառուցման հաշվարկները, Նեղոսի տիղմից օգտվելու գաղտնիքը եւ այլն):

Կրթության կադապարն այս ժամանակաշրջանում ընդունում է հետեւյալ տեսքը.

*Գիտակցություն + մտածողություն = ադապտացիա գոյություն ունեցող պայմաններին + ադապտացիա միջավայրի փոփոխություններին:*

Հասկանալի է, որ մտածողությանն ուղղված կրթահամակարգն ինքն է ստեղծում այդ նոր փոփոխությունները, քանի որ այս համակարգն արդեն պարունակում է մեթոդի հասկացությունը, որը թույլ է տալիս մտածողությանը բացահայտել իրեն շրջապատող աշխարհում նոր երեւույթներ, օրենքներ եւ օրինաչափություններ: Այդ իսկ պատճառով *երկաստիճան համակարգի* երկրորդ աստիճանը ձեռք է բերում երկու ենթաստիճան. առաջինը, նախկինի նման, ուղղված է «կիրթ մարդ»

ձեւավորելուն, իսկ երկրորդը տալիս է հետազոտական մեթոդ գործածող գիտնական:

Ինֆորմացիայի գրավոր հաղորդման համակարգը գոյատևեց մինչև անցած դարի վերջը եւ դեռ այսօր էլ հիմնականում պահպանում է իր նշանակությունը, չնայած որ 1980-ականներից սկսած նոր ինֆորմացիոն հեղափոխություն է տեղի ունենում:

Ինֆորմացիայի գրավոր հաղորդման համակարգին համապատասխանում է ներկայումս դեռևս առաջատար դեր խաղացող կրթական համակարգը, որի հիմնական կառույցներն են դեռ միջնադարում ստեղծված դպրոցը եւ համալսարանը, իսկ սուբյեկտները, ինչպես նշվեց, ուսուցիչը եւ գիրքը:

Ներկայիս աշխարհը բնութագրվում է որպես գլոբալ եւ պլուրալիստական, ընդ որում՝ պլուրալիզմը վերաբերում է գոյի բոլոր հնարավոր եւ ներկայումս ընկալելի դրսեւորումներին: Ուստի բազմազան եւ բազմաթիվ են այդ դրսեւորումների ուսումնասիրությանը եւ ուսումնասիրությունների կիրառությանը ծառայող մասնագիտությունները: Յուրաքանչյուրն այդ մասնագիտություններից մշակել է իր հատուկ գիտական լեզուն, որը չնայած բաղկացած է գրական լեզվի բառերից եւ ենթարկվում է վերջինիս օրենքներին, սակայն իր հաղորդած իմաստները եւ նշանակությունները կարող են զգալիորեն տարբերվել բառարանայինից: Այս ամենը ստեղծում է լրջագույն պրոբլեմներ կոմունիկացիայի ոլորտում, ինչի արդյունքն է «միտք-կոմունիկացիա» համակարգի աշխատանքի խափանումը:

Ինչպիսի՞ն պետք է լինի նոր կրթական համակարգը, որպեսզի կարողանա լուծել նոր ինֆորմացիոն համակարգի ծնած խնդիրները եւ շարունակի կատարել իր ադապտացնելու առաքելությունը: Փորձենք պատասխանել այս հարցին՝ ձեւավորելով վերը բերված կադապարներից բխող նոր մոդել:

Այս դարաշրջանը տարբերվում է նախորդներից նրանով, որ փոխվում են ոչ միայն գոյության պայմանները, փոփոխվում է ինքը՝ միջավայրը, քանի որ ձեւավորվել է գոյության բոլորովին նոր՝ վիրտուալ հարթություն:

Համակարգիչը եւ Ինտերնետը հնարավորություն են տալիս անձին առանձին ապրել եւ գործել անբողջովին ավտոնոմ կարգով. աշխատել համակարգչի միջոցով եւ համաշխարհային սարդոստայնի մեջ, շփվել, կատարել վճարումներ, ընտրել, կրթություն ստանալ, գնումներ կատարել եւ բազմաթիվ այլ բաներ անել, այսինքն՝ ապրել, մտածել եւ գործել: Եվ ամենակարեւորը՝ գտնել ցանկացած տիպի եւ քանակի ինֆորմացիա անհրաժեշտ հարցերի վերաբերյալ: Ինֆորմացիոն օվկիանոսի մեջ չխորտակվելու, չապակողմնորոշվելու եւ եղածի լավագույնն ընտրելու

համար անհրաժեշտ է արդեն ոչ թե մեթոդ, այլ մեթոդաբանություն, շնորհիվ որի հնարավոր է ձեւավորել գոյաբանական սխեմաների եւ պատկերների համակարգեր:

Մեթոդաբանությունը թույլ է տալիս դուրս գալ մտագործունեության դաշտ, ինչն անհրաժեշտ է կոմունիկատիվ խնդիրների լուծման համար:

Ներկայումս համընդհանուր տարածում են ստացել բազմաթիվ թրեյնինգներ, որոնց նպատակն է՝ կարճ ժամկետում տալ այնպիսի ունակություններ եւ գիտելիքներ, որոնք պետք է թույլ տան մարդուն ավելի հեշտ ադապտացվել միջավայրին: Այդ գիտելիքներն այն նվազագույն անհրաժեշտն են, ինչը կարող է թույլ տալ անձին պատկերացում կազմել այս կամ այն հարցի մասին (պարզ է, որ խոսքը չի վերաբերում տարբեր ինքնակոչ «մասնագետների» կազմակերպած դասընթացներին): Նման թրեյնինգները, ամառային դպրոցները եւ այլն՝ առաջին պատասխաններն են ստեղծված ճգնաժամային իրավիճակին, որոնք չեն կարող թերի չլինել:

Հավանաբար, ապագայի կրթահամակարգը պետք է հիմնվի հետեւյալ կադապարի վրա.

*Գիտակցություն + մտածողություն + մտագործունեություն = ադապտացիա գոյություն ունեցող պայմաններին + ադապտացիա միջավայրի փոփոխություններին + ադապտացիա նոր միջավայրին:*

Այս կադապարի կիրառումը նախ պահանջում է վերանայել առաջին երկու բաղադրիչների (գիտակցություն եւ մտածողություն) բովանդակությունը՝ հաշվի առնելով աշխարհում եւ մարդու կյանքում տեղի ունեցած հսկայական փոփոխությունները: Միաժամանակ, երրորդ բաղադրիչը (մտագործունեություն) պետք է ձեւավորվի ըստ այն պահանջների, որոնց բովանդակությունը բխում է նոր ստեղծված միջավայրի տրամաբանությունից:

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ**

### **Արտակ Շաքարյան**

Միջուկային էներգիայի զարգացման մասին Թուրքիայում խոսակցություններ սկսվեցին 1953թ.՝ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում Էյզենհաուերի «Ատոմներ հանուն խաղաղության» հայտնի ելույթից հետո: Սակայն Թուրքիայի փաստացի ներգրավումը միջուկային էներգիայի ոլորտ սկիզբ առավ 1955թ. մայիսին, երբ Անկարան Վաշինգտոնի հետ ստորագրեց երկկողմանի պայմանագիր՝ «միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման» ոլորտում համագործակցության վերաբերյալ: 1959թ. սկսվեց Թուրքիայի առաջին միջուկային ռեակտորի կառուցումը, որը տեղադրվեց Չեքմեջեի միջուկային հետազոտության ուսումնական կենտրոնում եւ ուներ զուտ ուսումնական նպատակներ:

Այդ օրվանից ի վեր միջուկային կայանների կառուցման վերաբերյալ հատուկ կետը Պետական պլանավորման կազմակերպության կողմից ներառվել է ամեն հնգամյա պլանում:

1970թ. ԱՄՆ-ից ու Իսպանիայից Թուրքիա ժամանած խորհրդատվական խմբի կողմից առաջարկվեց կառուցել 400 մեգավատ հզորությամբ CANDU ռեակտորը (*CANadian Deuterium Uranium reactor - Կանադական ռեակտոր, որը «հարմար է միջուկային զենքի տարածման համար»*. որպես կանոն, այս ռեակտորում, ուր օգտագործում են ծանր ջուրը որպես դանդաղեցուցիչ, ավելի շատ պլուտոնիում է արտադրվում): Ծրագրվում էր կայանը գործարկել արդեն 1977թ., սակայն 1971թ. մարտին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը հետաձգեց ծրագրերը: 1976թ. Ատոմային էներգիայի թուրքական խորհուրդը (ԱԷԹԽ) արտոնեց սկսել աշխատանքներն ատոմակայանի կառուցման համար ընտրված Աքքույու վայրում: 1977թ. բանակցություններ սկսվեցին երկու շվեդական ընկերությունների հետ՝ 660 մեգավատ հզորությամբ եռացող ջրով աշխատող ռեակտորի կառուցման համար: Սակայն այս անգամ էլ 1980թ. ռազմական հեղաշրջումը վերջակետ դրեց միջուկային էլեկտրակայան կառուցելու Թուրքիայի երկրորդ փորձին:

1983թ. ԱԷԹԽ-ն հայտարարեց մրցույթ ռեակտորներ վաճառող միջազգային ընկերությունների միջև: Մրցույթի արդյունքում՝ 1985թ. Թուրքիան ու Կանադան ստորագրեցին Միջուկային համագործակցության պայմանագիր: Սակայն 1986թ. հայտնի դարձավ, որ ծրագրի

իրականացումը հետաձգված է ֆինանսական անհամաձայնությունների պատճառով:

Այս անհաջողությունից հետո Թուրքիան դիմեց Արգենտինային: 1988թ. մայիսին երկու երկրներն ստորագրեցին 15 տարի ժամկետով միջուկային համագործակցության համաձայնագիր: Թուրքիան հույս ուներ կրկնօրինակել Արգենտինայի՝ միջուկային վառելիքի ցիկլի անկախության ընթացքը: Թուրքիան նաեւ հետաքրքրված էր 25 մեգավատ հզորությամբ արգենտինյան CAREM-25 թեթեւ ջրի ռեակտորով: 1990թ. հոկտեմբերին համաձայնությունն ձեռք բերվեց, որ կառուցվելու են CAREM-25 տիպի երկու ռեակտոր՝ յուրաքանչյուր երկրում մեկական: Աեթե նախկին տնօրեն Յալչըն Սանալանն ազնիվ գտնվեց՝ հայտնելով, որ CAREM-25-ը «...շատ փոքր է էլեկտրաէներգիայի արտադրության համար ու շատ մեծ՝ այն հետազոտական կամ ուսումնական նպատակներով օգտագործելու տեսակետից, սակայն **շատ հարմար է պլուտոնիումի արտադրության համար**»: Այսպիսով, Թուրքիայում միջուկային զենքի տարածման վտանգ էր առաջանում: ԱՄՆ ու այլ երկրների ճնշման հետեւանքով 1991թ. Թուրքիան չեղյալ հայտարարեց նախագիծը:

Միջուկային էներգիայի ծրագիրը սկսելու Թուրքիայի հերթական փորձը տեղի ունեցավ 1992թ. հոկտեմբերին, երբ Թուրքիայի էլեկտրաէներգիայի խորհուրդն ուղարկեց նախնական առաջարկների հայտարարություն: Աքքույուլի համար մրցույթի հայտարարումը տեղի ունեցավ 1996թ. դեկտեմբերին: Մրցույթին մասնակցեցին երեք կոնսորցիում՝ AECL, Westnighouse/Mitsubishi եւ Framatome/Siemens:

Ֆրանսիայի խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանության հետ կապված որոշման նախագծի առումով պաշտոնական Անկարան հայտարարեց, որ քննարկման է ենթակա Framatome/Siemens ֆրանս-գերմանական կոնսորցիումի վաղաժամկետ դուրսբերումը մրցույթից: Գերմանիայի ընդդիմությունը Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում եւս բարդացնում էր այս կոնսորցիումի դիրքերը: Ի պատասխան Թուրքիա – Եվրամիություն հարաբերությունների սառեցման՝ պաշտոնական Անկարան հնարավորություն տվեց ամերիկյան Westinghouse/Mitsubishi կոնսորցիումին ամրապնդել իր դիրքերը:

1997-1999թթ. Թուրքիայում ներքաղաքական իրավիճակը բավականին անկայուն էր: Մրցույթի վերաբերյալ վերջնական որոշումն անընդհատ ձգձգվում էր, իսկ 1999թ. օգոստոսին տեղի ունեցած Իզմիրի երկրաշարժը, որը 18 000 մարդկանց մահվան պատճառ դարձավ, ավելի բորբոքեց ճգնաժամային իրավիճակը:

2000թ. հուլիսին տեղի ունեցած կառավարության նիստում որոշում ընդունվեց հետաձգել Աքքույուի նախագիծը: Կառավարության հայտարարությունից պարզ դարձավ, որ հետաձգման որոշումը պայմանավորված չէր անվտանգության խնդիրներով, սակայն դրանում նաեւ հստակորեն ասված էր, որ հետաձգումը չի նշանակում ամենեւին հրաժարում նախագծից: Թուրքիայի միջուկային ծրագրերը հետաձգվեցին մինչեւ ավելի լավ ժամանակներ, սակայն դա շարունակվեց համարվել ռազմավարական ուղղություն, եւ հետազոտական աշխատանքները չդադարեցին:

\* \* \*

2005-2006 թվականներին՝ Իրանի միջուկային ծրագրերի ու դրանց հետ կապված միջազգային լարվածության պայմաններում, Թուրքիան կրկին զգրոցից հանեց իր միջուկային ծրագրերի թղթապանակն ու անցավ գործի:

2005թ. վերջին ԱՄՆ–Իրան սրված հարաբերությունները բերեցին նրան, որ Վաշինգտոնում լրջորեն սկսեցին պատրաստվել Իրանի վրա հավանական հարձակման նախագծմանը: Կրկին զգացվեց Անկարայի աջակցության կարիքը: 2005թ. դեկտեմբերին Վաշինգտոն–Անկարա «երթելեկությունը» բացվեց ԱՄՆ Դաշնային հետաքննությունների բյուրոյի ղեկավար Ռոբերթ Մյուլերի այցով: Ապա Անկարա այց կատարեց Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Փորթեր Գոսը, որը հանդիպում ունեցավ նախ թուրքական ազգային հետախուզության կազմակերպության ղեկավարներից Էմրե Թաների, ապա Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ: Գոսից հետո Անկարա այց կատարեց ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Յասի դե Յուլի Շեֆերը, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղար Բ.Ռայսը:

Պատասխան այց կատարվեց գրեթե զուգահեռ՝ դեկտեմբերի կեսին, Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար Յաշար Բյույուքանըթի կողմից, որն, ի դեպ, այս տարի դառնալու է Թուրքիայի Գլխավոր սպայակույտի ղեկավարը: Վերջինս հանդիպումներ ունեցավ ԱՄՆ Գլխավոր սպայակույտի ղեկավար, գեներալ Փիթըր Փեյսի, ցամաքային զորքերի հրամանատար Փիթըր Շունեյքըրի ու ԱՄՆ պաշտպանության փոխնախարար, Անկարայում ԱՄՆ նախկին դեսպան Էրիք Էդելմանի հետ: 2006թ. հունվարին Վաշինգտոն այց կատարեց Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Յիդիթ Ալփոզանը, որը հանդիպումներ ունեցավ պետքարտուղար Բ.Ռայսի, ինչպես նաեւ պաշտպանության փոխնախարար Էդելմանի հետ:

Այս համատեքստում բավականին ուշագրավ է Թուրքիայի էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Յիլմի Գյուլերի այցն ԱՄՆ, որը տեղի ունեցավ 2006թ. փետրվարին: Նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ էներգետիկայի նախարար Սեմյուել Բոդմանի, ԱՄՆ պետդեպարտամենտի տնտեսական ու էներգետիկ գծով պաշտոնյաների հետ: Բացի այդ, նա հատուկ այց կատարեց Վիրջինիա նահանգում գտնվող North Anna միջուկային կայան: Այցի ավարտին Գյուլերի տված մամլո ասուլիսից հետաքրքիր որոշ տեղեկություններ ենք քաղում նրա առաքելության վերաբերյալ: Ըստ Գյուլերի՝ Թուրքիան նույնպես ծրագրում է ավելի բազմատեսակ դարձնել էներգետիկ աղբյուրները, նվազեցնել կախվածությունը նավթից եւ ուղղել հայացքը ներքին աղբյուրներին (ինչպես դա բնորոշեց ԱՄՆ նախագահ Բուշ-կրտսերը 2006թ. հունվարի 31-ի իր ելույթում): Համաձայն Գյուլերի՝ Թուրքիան ծրագրում է մինչեւ 2020թ. մոտ 54 000 մեգավատ ներդրումային ծրագրի 10%-ը ծածկել միջուկային էներգիայի հաշվին: Վաշինգտոնում Թուրքիային առաջարկվել է կառուցել տեխնոլոգիական վերջին նորարարություններով սարքավորված միջուկային կայաններ: Մասնավորապես, ԱՄՆ էներգետիկայի փոխնախարար Քլեյ Սելը հայտարարել է, թե «Թուրքիան այն դասական երկրներից է, որի հետ համագործակցությունը հարմար ենք գտնում»: Համաձայն Սելի՝ ԱՄՆ-ը նախատեսում է նաեւ բավարարել միջուկային կայաններ կառուցել ցանկացող երկրների վառելիքի կարիքը:

Արդեն 2006թ. մարտին Գյուլերը ոչ միայն հայտարարեց, որ նախագծվում է կառուցել 3 միջուկային կայան, այլեւ նշեց դրանց վայրերը՝ Սինոփ, Մերսին-Աքքույու եւ Մուղլա (երեքն էլ՝ Թուրքիայի արեւմտյան շրջաններում): Թուրքիայի արտաքին գործերի նախարար Գյուլը մարտին հանդիպում ունեցավ ԱԷՄԳ նախագահ Մոհամեդ Էլ Բարադեյի հետ, որի ընթացքում խնդրեց աջակցություն Թուրքիայի միջուկային ծրագրերի հարցում եւ նշեց, որ պաշտոնական հայտարարությունը լինելու է հունիս ամսին:

\* \* \*

Այսպիսով, Թուրքիայի միջուկային ծրագրերն սկիզբ առան ԱՄՆ նախագահ Էյզենհաուերի «Ատոմներ հանուն խաղաղության» ելույթով եւ այժմ նոր ուժ են ստանում ԱՄՆ նախագահ Բուշ-կրտսերի ելույթից, որն իր երկրի՝ նավթից կախվածությունը թուլացնելու համար կոչ արեց հայացքն ուղղել էներգիայի այլընտրանքային աղբյուրների՝ մասնավորապես միջուկային էներգիայի վրա:

Ինչպիսի՞ն կլինի Մերձավոր Արեւելքում առաջնորդի դերի հավակնող



Թուրքիայի դիրքորոշումը, եթե տարածաշրջանում ընդդեմ Իսրայելի միահեծան միջուկային իշխանության փաստացի հանդես գա Իրանը: Արդյո՞ք Անկարան, որը պաշտոնապես դեմ է արտահայտվում միջուկային զենքի տարածմանը, կկարողանա հետ կանգնել այդ գայթակղությունից: Անկարան արդեն կես դար զբաղվում է իր միջուկային պոտենցիալի զարգացման խնդիրներով, ունի գիտատեխնիկական բավական մեծ ներուժ: Անհաջող փորձերն ամեն անգամ ավելի են մոտեցրել Թուրքիային իր նպատակին: Միջուկային էներգիան Անկարայի համար միշտ եղել է առաջնայնությունների շարքում, եւ ժրագրերի արտաքուստ կասեցումը չի ենթադրել հետնաբեմյան աշխատանքների դադարեցում: Թուրքիան պարզապես սպասում է միջազգային հարմար իրավիճակի, որպեսզի ի լուր աշխարհի հայտարարի իր միջուկային նկրտումների մասին:

## ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

### *Սուրեն Սարյան*

Վերջին ամիսներին անցնելով լուրջ ներքին փոփոխությունների միջով՝ իսրայելական քաղաքական կյանքը հայտնվել է նոր իրավիճակում:

Այսօր Իսրայելը մոտեցել է հերթական արտահերթ ընտրություններին, որոնք աչքի են ընկնում այս երկրի համար բոլորովին նոր որակներով: Առաջին անգամ վերջին երեսուն տարվա ընթացքում որպես հաղթանակի հիմնական հավակնորդներ հանդես են գալիս ոչ թե երկու ավանդական՝ աջակողմյան «Լիկուդ» եւ ձախակողմյան «Ավոդա» կուսակցությունները, այլ եւ արդեն նախկին վարչապետ Արիել Շարոնի կողմից հիմնադրված «Քադիմա» կուսակցությունը:

Ներկա արտահերթ ընտրությունները միայն խորհրդանշում են այն համակարգային ճգնաժամը, որում հայտնվել է Իսրայելը: Երկրում առկա է ներքաղաքական համակարգի՝ երկկուսակցական մոդելի («Լիկուդ»-«Ավոդա») փլուզում, որին գումարվում են ուժեղ առաջնորդների հեռացումն ասպարեզից, կոռուսպացված քաղաքական վերնախավի փաստը: Սա անդրադառնում է նաեւ արտաքին ճակատում ընթացող զարգացումների վրա: Իսկ այստեղ իրադրությունը եւս բարվոք չէ, եթե հաշվի առնենք պաղեստինյան վերջին ընտրություններում ՀԱՄԱՍ-ի հաղթանակը, «Հեզբալահի» չդադարող հարձակումները Հարավային Լիբանանի հետ սահմանում եւ Իրանի միջուկային ծրագիրը՝ Թեհրանում հնչող հակաիսրայելական ճարտասանության ֆոնին: Ավելին, իսրայելցի զինվորականների կանխատեսումներով՝ մոտակա ժամանակում Իսրայելին սպասվում է մեծածավալ մերձավորարեւելյան պատերազմ:

Ներքաղաքական այս նոր փուլն սկսեց զարգանալ, երբ 2005թ. նոյեմբերին վարչապետ Արիել Շարոնը որոշեց թողնել իր կողմից երեսուն տարի առաջ հիմնադրված «Լիկուդ» կուսակցության շարքերը եւ հիմնել նոր՝ «Քադիմա» կուսակցությունը: Պառակտման պատճառը պաղեստինցիներից տարանջատման եւ գրավյալ տարածքներում հրեական բնակավայրերի վերացման հարցում իր կուսակիցների բացասական դիրքորոշումն էր, ինչպես նաեւ կոալիցիոն կառավարության մեջ մտնող «Ավոդա» կուսակցությունում տեղի ունեցած

«իշխանափոխությունը», երբ նրա երկարամյա առաջնորդ Շինոն Պերեսին փախարհնեց արհմիութենական գործիչ Ամիր Պերեցը:

Արդյունքում՝ «Լիկուդն» ու «Ավոդան» արդեն չեն դիտվում որպես Իսրայելի քաղաքականության անկյունաքարային ուժեր: Դա, թերևս, բնական գործընթաց է, երբ ապագադափարականացված կենտրոնը դուրս է մղում մեծ քաղաքականությունից աջերին եւ ձախերին: Այս առումով, «Քադիման» կարող է դառնալ Իսրայելի նոր ընտրանու ձեւավորման կենտրոն:

«Քադիմայի» շանսերն արտահերթ ընտրություններում դիտվում էին չափազանց բարձր, սակայն հունվարի սկզբին Շարոնի ուղեղի կաթված ստանալը եւ մահամերձ վիճակը, ինչպես նաեւ դրան հետեւած Պաղեստինում ՅԱՄԱՍ-ի հաղթանակը փոխեցին իրերի ընթացքը:

Այժմ պետք է ենթադրել, որ «Քադիման» չի ստանալու ձայների մեծամասնություն եւ ստիպված է լինելու համաձայնությունների գալ կամ «Լիկուդի», կամ «Ավոդայի» հետ՝ նոր կոալիցիոն կառավարություն կազմելու համար:

Քաղաքական տեսանկյունից «Քադիման» եւ «Ավոդան» զբաղեցնում են համանման դիրքեր՝ ներկայումս հանդես գալով միակողմանի զիջումների օգտին, մինչդեռ «Լիկուդը» դեմ է այդ քայլերին: Մյուս հարցերում որեւէ էական տարբերություն այս երեք կուսակցությունների միջեւ գոյություն չունի: Երեքն էլ դեմ են 1967թ. հունիսյան պատերազմից առաջ սահմանների վերականգնմանը, պաղեստինցի փախստականների վերադարձին եւ չեն առարկում պաղեստինյան անկախ պետության ստեղծման գաղափարին: Իրենց հերթին, «Քադիման» ու «Լիկուդն» ունեն համանման սոցիալ-տնտեսական ծրագրեր:

Իսրայելի համար այժմ սկսվում է նոր պատմական փուլ նաեւ այն առումով, որ Ռաբինի, Շարոնի եւ Պերեսի հեռանալուց հետո երկրում ավարտվում է առաջնորդների հերոսական դարը: Այլեւս չկան քաղաքական առաջնորդների այն սերնդի ներկայացուցիչները, որոնք մասնակցել են Իսրայելի անկախության համար պայքարին, հրեական պետության կայացմանը, որոնք եղել են Դավիթ Բեն-Գուրիոնի, Յաիր Վեյցմանի, Գուրա Մեյիրի, Մոշե Դալանի աշակերտներն ու զինակիցները:

Այս տեսանկյունից հատկապես Արիել Շարոնի հեռացումը լուրջ կորուստ է համարվում Իսրայելի համար: Շարոնը Մերձավոր եւ Միջին Արեւելքի նշանավոր քաղաքական առաջնորդներից էր եւ ուժեղ անհատականություն: Նա մասնակցել է Իսրայելի պետության ստեղծմանը, գիտեր, թե ինչի համար է այն ստեղծված, կարող էր որոշումներ

կայացնել առանց քաղաքական ղեկավարության կարծիքը հաշվի առնելու, ինչով մի քանի անգամ փրկել է երկիրը ծանր կորուստներից: Միայն նա կարող էր խիզախորեն անցնել Սուեզի ջրանցքը, գրավել Լիբանանը, ինչպես եւ՝ հանել իսրայելական բնակավայրերը Գազայից: Իզուր չէ, որ նրան անվանում էին «Արիկ՝ Իսրայելի թագավոր»:

Իր կառավարման տարիների ընթացքում Շարոնը եկավ այն եզրակացության, որ Իսրայելը պետք է տարանջատվի արաբներից, այլ ոչ թե փորձի խաղաղություն կնքել նրանց հետ, քանզի արաբներին վստահելն Իսրայելում համարվում է անլրջություն: Բայց եւ անվերջ պատերազմական վիճակում գտնվելը Շարոնը ելք չէր համարում: Նա որոշեց տարանջատել Իսրայելը պաղեստինցիներից, հանել իրենից պատասխանատվությունը պաղեստինյան տարածքներում կատարվածի համար եւ կառուցել լիարժեք հրեական պետություն:

Փաստորեն, մինչ այդ իսրայելական քաղաքականության մեջ շրջանառվող հիմնական գաղափարներն այլեւս չէին արտացոլում իրականությունը: «Ավոդայի» սկզբունքը՝ տարածքային զիջումների դիմաց ստանալ խաղաղություն, այդպես էլ չդարձավ իրականություն: Աջերի գաղափարները՝ երբեք թույլ չտալ Պաղեստինյան պետության ստեղծումը եւ պահպանել հրեական բնակավայրերը Գազայում եւ Յորդանանի Արեւմտյան ափին, եւս չաշխատեցին: Ահաբեկչությունն ու ժողովրդագրական գործոնը դառնում էին տարածաշրջանից Իսրայելի դուրսմղման «մեղմ» եւ արդյունավետ տարբերակ: Դա էլ հարցականի տակ է դնում Իսրայելի ապագան:

Ըստ իսրայելցի ժողովրդագրագետ Արոն Սոֆերի տվյալների՝ մինչեւ 2020 թվականը այն տարածքում, որը ներառում է Իսրայելն ու գրավված տարածքները, բնակչության մոտ 60 տոկոսը լինելու է ոչ հրեական:

Այսօր արդեն Իսրայելում եւ հարակից տարածքներում ապրում են մոտ 9 մլն մարդ, որոնցից իսրայելական քաղաքացիություն ունեն 1,2 մլն արաբ: Նախկին ԽՍՀՄ-ից ներգաղթի դադարեցումից հետո Իսրայելն այլեւս չունի ռեսուրսներ իր հրեական բնակչությունը լրացնելու համար:

Այս իրավիճակում Շարոնը հասկացավ, որ այլեւս անհնար է ապահովել 3 միլիոն արաբներով բնակեցված տարածքի քաղաքական ու ռազմական վերահսկողությունը եւ ինչ հետեւանքներով է հղի այս վիճակն Իսրայելի ժողովրդագրական ապագայի համար: Եվ նա որոշեց գնալ տարանջատման: Դա նշանակում էր Իսրայելի սահմանի գծով բաժանարար պատի կառուցում, ինչպես նաեւ Գազայի հատվածի եւ

Արեւմտյան ափի մեծ մասի հանձնում պաղեստինյան իշխանություններին, որտեղ նրանք կստեղծեին իրենց անկախ պետությունը: Խաղաղության հասնել այդ դեպքում էլ հնարավոր չէ, սակայն կհաստատվեր զոհեղ զինադադար՝ մինչեւ ավելի բարենպաստ ժամանակների գալը:

Սակայն տարանջատումն էլ կարող է որեւէ դրական արդյունքի չբերել, եթե Իսրայելը չլուծի իր մոտ 1,2 մլն արաբ քաղաքացիների խնդիրները: Նրանք, նույն Սոֆերի հաշվարկներով, արդեն 2020-ին կազմելու են երկրի բնակչության 32%-ը:

Այն, ինչ անում էր Շարոնը, արտացոլում էր իսրայելական հասարակության մեծամասնության կամքն ու տրամադրությունները՝ հոգնածությունն անընդհատ բռնություններից եւ անպտուղ բանակցություններից:

Շարոնը, որն ինքն էր հիմնադրել հրեական բնակավայրերը Յորդանանի Արեւմտյան ափին եւ իր կյանքի մեծագույն նպատակներից էր համարում դրանց ինտեգրումը Իսրայելի պետությանը, վերջում եկավ այն մտքին, որ Արեւմտյան ափը կաղավաղի Իսրայելի պատմական նպատակը՝ հրեաների համար հայրենիքի ձեռքբերման փոխարեն հրեական բնակչությունը կդառնա սեփական երկրում փոքրամասնություն:

Ինչեւէ, Շարոնի հեռացմամբ «Քաղիման» կանգնել է առաջնորդության խնդրի լուծման անհրաժեշտության առաջ: Ներկայիս վարչապետի պաշտոնակատար Էհուդ Օլմերտը լավ վարչական աշխատող է, սակայն չունի քաղաքական փորձ եւ խարիզմա, որոնք թույլ կտային «Քաղիմային» անվերապահորեն եւ երկարաժամկետ առումով վերցնել երկրի ղեկն իր ձեռքը:

Օլմերտը Շարոնի գաղափարախոսական ժառանգորդն է՝ լինելով նախ Մեծ Իսրայելի (Միջերկրական ծովից մինչեւ Յորդանան գետ ձգվող պետության) գաղափարի քարոզիչ, ապա՝ տարածքային զիջումների եւ արաբների հետ կոշտ տարանջատման գաղափարի ջատագով: Երեք տարի առաջ հենց փոխվարչապետ Օլմերտն առաջարկեց բնակավայրերի դուրսհանումը Գազայի հատվածից՝ հայտարարելով, որ եթե Իսրայելը փորձի իր հսկողության տակ պահել Գազան եւ Յորդանանի Արեւմտյան ափի մեծ մասը, ապա հրեաները քանակությամբ կզիջեն արաբներին, եւ Իսրայելը կկորցնի իր ինքնությունը. այդ պատճառով հրեական կողմը պետք է դիմի միակողմանի քայլերի:

Իսկ դա նշանակում է, որ Իսրայելը հակված է ամփոփվել հրեական մեծամասնություն ունեցող տարածքներում, որտեղ նա կարող է վերապրել: Այդ նոր սահմանները ներառում են նաեւ Արեւմտյան ափի

հրեական խոշոր բնակավայրերն ու ամբողջ Երուսաղեմը: Ինչպես Օլմերտը հայտարարել է, «սա սիոնիստական գաղափարից հրաժարում չէ, ընդհակառակը, սիոնիստական նպատակների բուն իրականացումն է՝ ապահովել հրեական ժողովրդավարական պետության գոյությունը Իսրայելի հողում»:

Միակ քաղաքական առաջնորդը, ով կարող է մարտահրավեր նետել «Քաղիմային» (եթե ոչ մարտին կայանալիք ընտրություններում, ապա տեսանելի ապագայում), Բենյամին Նեթանյահուն է, որն ունի ուժեղ առաջնորդի իմիջ եւ ներկայանում է՝ որպես Արեւմտյան ափի 400 000 հրեա բնակիչների պաշտպան: ՀԱՄԱՍ-ի հաղթանակն էապես ուժեղացրեց նրա դիրքերը, քանի որ նա միշտ էլ պնդում էր, որ Իսրայելը չունի բանակցության գործընկեր ի դեմս արաբների:

Այսպիսով, Իսրայելը կանգնած է ներքին բարդ խնդիրների առջեւ, եւ դրանց պատճառները հիմնավոր են: Լուրջ ճգնաժամ է ապրում իսրայելական տնտեսությունը, որտեղ հավաքվում են աշխարհում ամենաբարձր հարկերը: Բանակը, որը տարածաշրջանում լավագույնն է համարվում, վաղուց է զգում մարդկային եւ տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն, անգամ պահանջում է անցում պրոֆեսիոնալ զինծառայության, քանի որ պարտադիր զինծառայությունն այլեւս չի համարվում ազգային հպարտության դրսեւորում: Թեեւ երկրում ուժեղ են կրոնական հոսանքների դիրքերը, սակայն ինքը՝ հուդայական կրոնը, քրիստոնեության նման ճգնաժամի մեջ է՝ դադարելով լինել միլիոնավոր հրեաների ուղեցիչը: Իսրայելը մտել է յուրահատուկ «հետսիոնիստական փուլ», երբ այն առաքելությունը, հանուն որի հրեաները վերադառնում էին ավետյաց երկիր եւ կերտում իրենց պետությունը, այլեւս սպառված է: Այս ամենին զուգարվում է եւ այն, որ նոր սերնդի առաջնորդները դեռ պետք է սովորեն կառավարել առանց պետության «նահապետների»:

## **ԻՐԱՔ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ Արաքս Փաշայան**

ԱՄՆ-ի կողմից Իրաքի գրավումից եւ Սադամ Բուսեյնի վարչակարգի տապալումից հետո ընկած տարիներին ոչ միայն հնարավոր չեղավ այդ երկրում հիմնել արեւմտյան դեմոկրատիայի վրա խարսխված պետական կառույցներ, այլեւ կասկածի տակ դրվեց Իրաք պետության գոյությունը:

2006թ. փետրվարի 22-ին Սամարա քաղաքի ոսկեզմբեթ «Ալ-ասքարիյա» մզկիթի մոտ տեղի ունեցած հուժկու պայթյունն ավելի սրեց Իրաքի կրոնադավանական երկու գլխավոր համայնքների՝ սուննիների եւ շիաների միջեւ առանց այդ էլ առկա լարվածությունը: Դրան հաջորդեցին շիաների պատասխան ահաբեկչական գործողությունները սուննիների եւ նրանց պատկան մզկիթների վրա Բաղդադում եւ այլ բնակավայրերում: Բռնությունների զոհ դարձան հարյուրավոր մարդիկ Իրաքի տարբեր շրջաններում: Մայրաքաղաքում հայտարարվեց պարետային ժամ, իսկ նախագահ Ջալալ Թալաբանին վարչապետ, դավանանքով շիա Իբրահիմ ալ-Ջաֆարիին կոչ արեց հրաժարական տալ՝ հանուն ազգային միասնության: Նա նաեւ նշեց, որ երկիրը ներքաշված է դավադրության մեջ:

Ս.Բուսեյնի վարչակարգի տապալումից հետո Իրաքի բնակչության շուրջ 60%-ը կազմող շիաները, այս երկրի պատմության մեջ առաջին անգամ փորձելով ձերբազատվել սուննի փոքրամասնության գերիշխանությունից, իրենց ձեռքն են վերցրել իշխանական լծակների զգալի մասը: Ի պատասխան, 2003-ից սկիզբ առած սուննիական հակազդեցությունն աստիճանաբար արմատացավ՝ վերածվելով լայնածավալ ահաբեկչությունների: Ներկայումս շիաների եւ սուննիների՝ միմյանց նկատմամբ անհանդուրժողականությունը ձեռք է բերել բռնարարքների շղթայի տեսք՝ քաղաքական եւ կրոնական գործիչների, խաղաղ բնակիչների սպանություն, զինված հարձակումներ, մզկիթների պայթեցումներ եւ այլն:

Իրաքում տեղի ունեցած վերջին իրադարձությունները որոշակի հիմք են տալիս ենթադրելու, որ ոչ հեռու ապագայում բախումներն Իրաքում կարող են վերաճել քաղաքացիական պատերազմի: Իրաքի իշխանությունները, փաստորեն, ի գորու չեն վերահսկել իրավիճակը, ապահովել երկրի կայունությունն ու անվտանգությունը, իսկ ներկա

փուլում օկուպացիոն գորքերի հնարավոր դուրսբերումը կարող է հանգեցնել երկրում բացարձակ անիշխանության:

Իրաքում իրավիճակի անվերահսկելիությունը հղի է մի շարք ծանր հետեւանքներով: Առաջին հերթին, սպառնալիքի տակ կարող է դրվել երկրի միասնականությունը: Իրաքի հնարավոր մասնատման արդյունքում՝ հյուսիսում կարող է ձեւավորվել քրդական պետություն: Քրդական ղեկավարությունը մեկ անգամ չէ, որ հայտարարել է, թե քաղաքացիական պատերազմի դեպքում պաշտոնապես կհռչակի Իրաքյան (կամ Զարավային) Քուրդիստանի անկախությունը: Չի բացառվում նաեւ, որ քրդերը դաշնակցեն հակամարտ կողմերից որեւէ մեկի, առավել հավանական է՝ շիաների հետ: Քրդական գործունի ակտիվացումից զգուշանում են, առաջին հերթին, Թուրքիան, Սիրիան եւ Իրանը: Իրաքի մասնատմանը դեմ են նրա սահմանակից բոլոր երկրները, որոնք քաղաքացիական պատերազմի դեպքում կարող են ներգրավվել հակամարտության մեջ:

Այսօր մի բան պարզ է. վերականգնել Իրաքը որպես միասնական եւ կայուն պետություն՝ շատ բարդ եւ դժվար գործ է, քանի որ քաղաքական տարբեր խմբավորումների միջեւ լուրջ տարաձայնություններ կան՝ կապված Իրաքի պետական, տարածքային-քաղաքական հարցերի հետ:

Ինչպես նշեցինք, Իրաքում խիստ պայթյունավտանգ այս իրավիճակը շատ թե քիչ զսպող գործոնը երկրում ամերիկյան ռազմական ներկայությունն է: Վաշինգտոնը մեկ անգամ չէ, որ հայտարարել է, թե նպատակ ունի զգալիորեն կրճատել կամ ընդհանրապես դուրս բերել գորքերը երկրից, միայն այն դեպքում, եթե տեղական բանակը եւ ոստիկանությունն ի վիճակի չեն հասնում անվտանգությունն ու կարգուկանոնը: Սակայն ե՞րբ իրաքցի ուժայինները կարող են ինքնուրույն իրականացնել այդ գործը, պարզ չէ: Ամերիկյան փորձագետները նշում են տարբեր ժամկետներ՝ ընդհուպ մինչեւ չորս տարի:

Այսօր Իրաքը վերաճել է նաեւ ահաբեկչության «էպիկենտրոնի», ինչպիսին Աֆղանստանն էր խորհրդային ներխուժման տարիներին, որտեղ ռազմական պատրաստվածություն անցած մոջահիդները հետագայում դարձան ահաբեկչական խմբավորումների հիմնական ռեսուրսը եւ սկսեցին գործել իսլամի ավանդական տարածման շրջաններում ու դրանից դուրս: Այսօր Իրաքում գործում են ահաբեկչական մի շարք խմբավորումներ, որոնց կորիզը տարբեր երկրներից Իրաք ներթափանցած վարձկաններն են:

Իրավիճակի հետագա վատթարացումից խուսափելու համար ներկայումս առաջ է քաշվում ազգային միասնության կառավարության ձեւավորման հարցը: Ըստ այդմ՝ քաղաքական պաշտոնները կբաժան-



վեն ոչ ըստ կրոնական կամ էթնիկ պատկանելության. կարելոր նախապայման է, որպեսզի իշխանության գան այն գործիչները, ովքեր իսկապես ձգտում են Իրաքի միասնականությանն ու անկախությանը, աչքի են ընկնում արհեստավարժությամբ, անկաշառությամբ, կենտրոնամետ տրամադրություններով: Այս տեսանկյունից խիստ կարելոր դերակատարություն պետք է ստանձնեն նորացված եւ արդյունավետ գործող ուժային կառույցները: Բացի այդ, անհրաժեշտ է լուծարել պարտիզանական խմբերը՝ դրանց ուժերն ուղղորդելով քաղաքական պայքարի մեջ: Կարելոր նախապայման է, որպեսզի երկիրն ունենա խարիզմատիկ առաջնորդ, որը չի վախենա կտրուկ քայլերից: Ցանկացած մարդ, որին կարող է իշխանության բերել ԱՄՆ-ը, ի սկզբանե դատապարտված է:

Այսօր երկիրը քաղաքացիական պատերազմից զերծ պահելու համար անհրաժեշտ է, որպեսզի կրոնադավանական երկու համայնքներն արդյունավետ երկխոսություն սկսեն՝ հանդես բերելով չափավոր եւ հանդուրժողական կեցվածք միմյանց նկատմամբ: Մինչդեռ թե՛ շիաները եւ թե՛ սուննիներն իրենց շահերն ու հետաքրքրությունները ոտնահարված եւ վտանգված են համարում, եւ փոխադարձ զիջումների գնալու պատրաստակամությունը տեսանելի չէ: Չնայած այս հանգամանքին, փետրվարի 25-ին Բաղդադում շիա եւ սուննի համայնքների հոգեւոր առաջնորդների հանդիպմանը որոշվեց ստեղծել համազգային կրոնական-քաղաքական մարմին, որը կփորձի օպերատիվ կերպով արձագանքել ծայրահեղականների գործողություններին, որոնք ձգտում են միջկրոնական բախումների միջոցով ապակայունացնել իրավիճակն Իրաքում:

Անշուշտ, սխալ կլինի կարծել, թե առանձին հայտարարությունների միջոցով հնարավոր է հաղթահարել երկուստեք առկա անվստահությունը, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ թշնամությունը: Չի բացառվում, որ անկայուն այս իրավիճակը (հակամարտությունը շիաների եւ սուննիների միջեւ, թույլ կենտրոնական իշխանությունը, անվտանգության ցածր մակարդակը, բանակի եւ ոստիկանության ոչ արդյունավետ գործունեությունը, անջատողական ձգտումները) երկար շարունակվի:

ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը հայտարարել է, որ լուրջ չի վերաբերվում Իրաքում քաղաքացիական պատերազմի հնարավորությանը: Սակայն նրա հետ կարծես թե համամիտ չէ ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ջ.Նեգրոպոնտեն, որն ասել է, թե նման սցենարը կհանգեցնի ընդհուպ մինչեւ Մերձավոր Արեւելքի սուննի եւ շիա պետությունների բախմանը:

Բուշի վարչակարգի իրաքյան քաղաքականությունը խիստ քննադատության է արժանանում ամերիկյան մի շարք առաջատար քաղա-

քաղաքացիների եւ վերլուծաբանների, այդ թվում՝ Ջ.Բժեզինսկու եւ Ֆ.Ֆուկույամայի կողմից: Վերջինիս կարծիքով՝ ԱՄՆ-ը պետք է վերանայի միլիտարիզմն իր արտաքին քաղաքականության, այդ թվում՝ իրաքյան ուղղության մեջ: «Այսօր, երբ մենք կանգնած ենք Իրաք ներխուժման երրորդ տարեկիցի նախաշեմին, գրեթե ակնհայտ է, որ պատմության դատաստանն ինքնին պատերազմի եւ այն ծնող գաղափարախոսության նկատմամբ, դաժան կլինի»,–նշում է նա:

Ֆ.Ֆուկույաման քննադատում է Իրաքը եւ ամբողջ Մերձավոր Արեւելքը դեմոկրատացնելու՝ նեոպահպանողականների ծրագրերը: Ըստ նրա՝ Վաշինգտոնը ոչ մի կերպ չկարողացավ հիմնավորել Իրաք ներխուժումը. նա արհեստականորեն մեծացրեց այն սպառնալիքը, որ ներկայացնում էր արմատական իսլամը՝ մոլեռանդ ահաբեկիչներին շփոթելով «իրաքյան» սպառնալիքի հետ:

Ըստ Ջ.Բժեզինսկու՝ դեմոկրատիայի տարածման ԱՄՆ քաղաքականությունը, ընդհակառակը, հանգեցրեց արմատականության եւ ահաբեկչության առավել ընդլայնմանը, մեծացրեց ԱՄՆ-ի նկատմամբ իսլամական աշխարհի անտագոնիզմը:

Անշուշտ, սխալ էր ահաբեկչության արմատները փնտրել Մերձավոր Արեւելքում դեմոկրատիայի բացակայության մեջ: Բացի այդ, ճիշտ չէր այն հաշվարկը, թե բավական է միայն դիկտատորական վարչակարգը վերացնել, եւ երկիրը սահուն կերպով կանցնի դեմոկրատիայի՝ առանց թեւակոխելու դրա համար անհրաժեշտ պատմական զարգացման որոշակի եւ անհրաժեշտ փուլեր:

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱԱԲ  
ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
Անդերս Օսլունդ**

*Ռուսաստանի գծով ամերիկյան առաջատար մասնագետ **Անդերս Օսլունդը** «Նեգավիսիմայա գազետա»-ին տված բացառիկ հարցազրույցում վերլուծում է ռուսական ուղղությամբ Վաշինգտոնի քաղաքականությունը եւ նրանում շտկումներ մտցնելու հնարավորությունը: Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ հիշյալ հարցազրույցից:*

*Հարց* - ԱՄՆ-ում վերջին ամիսներին սաստկանում է Ռուսաստանի հասցեին քննադատության ալիքը: Ինչպե՞ս եք գնահատում ժողովրդավարության ներկայիս վիճակը Ռուսաստանում:

*Պատ.* - Ռուսաստանում այսօր նուրբ ավտորիտար վարչակարգ է: Մասնավորապես, այդ են վկայում ամերիկյան Freedom House (Ազատության տուն) հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպության տվյալները, ինչպես նաեւ Սթիվեն Ֆիշի «Ժողովրդավարության նահանջը Ռուսաստանում» նոր գիրքը: Ռուսաստանը միակն է, որը նախորդ տարի Freedom House-ի դասակարգման աղյուսակում «մասնակի ազատ»-ից տեղափոխվել է «անազատ» երկրների շարքը:

*Հարց* - ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը վերջերս հայտարարեց, թե ներկայումս Ռուսաստանի ու ԱՄՆ հարաբերությունները, «հնարավոր է, ավելի լավն են, քան երբեւէ եղել են տեսանելի անցյալում»: Իսկ դրանից հետո ամերիկյան ՋԼՄ-ը հաղորդեցին, որ Ջորջ Բուշի վարչակազմը քննում է Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության փոփոխության հնարավորությունը: Ինչպե՞ս ընկալե՞նք վերջին ժամանակներս Վաշինգտոնից հնչող հակասական ազդանշանները: Կարելի՞ է խոսել, արդյոք, Ռուսաստանի հարցում ԱՄՆ վարչակազմում պառակտման մասին:

*Պատ.* - Վարչակազմում մի ամբողջ շարք հարցերում միշտ էլ կան որոշակի տարածայնություններ: Սակայն կարելի է առանձնացնել նեոպահպանողականների մի ազդեցիկ խումբ, որը պնդում է, թե

ժողովրդավարության առկայությունը Ռուսաստանում չափազանց կարելու է: Նրանց կարծիքով, ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական անհաջողություններից մեկը հենց այն է, որ Ռուսաստանը «զլորվում» է դեպի ավտորիտարիզմ: Երկրորդ խումբը՝ դրանք իրապաշտներն են, որոնք գտնում են, թե Ռուսաստանի ներքին քաղաքականությունը եւ նրանում ժողովրդավարությունն ԱՄՆ համար նշանակություն չունեն: միակ կարելու բանն այն է, թե օժանդակում է, արդյոք, Մոսկվան ԱՄՆ քաղաքականության անցկացմանը, առաջին հերթին՝ միջուկային զենքի չտարածման կարելուագույն հարցում եւ Իրանի խնդրում: Նշեն, որ ԱՄՆ վարչակազմում Ռուսաստանի նկատմամբ այս երկու մոտեցումների հաշվեկշռումը կախված է օրակարգից:

Ներկայումս առաջնային նշանակություն ունեն երեք թեմաներ: Առաջինը ժողովրդավարությունն է Ռուսաստանում՝ այս տարվա ամռանը Սանկտ Պետերբուրգում կայանալիք «Մեծ ութնյակի» զագաթաժողովի նախաշեմին: Ամերիկացիներին շատ է անհանգստացնում, թե ինչ կարելի է անել, որպեսզի հյուսիսային մայրաքաղաքում բարձրաստիճան հանդիպումներում հիմար չերելան: Ի դեպ, այս հարցը տրվում է ոչ միայն Վաշինգտոնում, այլեւ «Մեծ ութնյակի» մյուս առաջատար երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում... Երկրորդը նախագահական ընտրություններն են Բելառուսում եւ խորհրդարանական ընտրություններն Ուկրաինայում: Ռուսաստանն ու ԱՄՆ-ը բացահայտորեն հակադիր կողմեր կբռնեն: Վերջապես, երրորդ թեման Իրանն է: Զատկապես այստեղ Մոսկվան կարող է փրկել իր հարաբերություններն ԱՄՆ-ի հետ:

*Չարդ* - Ձեր կարծիքով, Ռուսաստանի հանդեպ ո՞ր մոտեցումը կարող է գերակայել՝ առավել գործնական, թե՞ առավել կոշտը:

*Պատ.* - Դա կախված է աշխարհում տիրող իրավիճակից եւ, իհարկե, հենց Ռուսաստանից: Մոսկվան հեշտությամբ կարող է ազդել իր նկատմամբ ԱՄՆ քաղաքականության վրա: Այստեղ, նախելառաջ, նշանակություն ունի Մոսկվայի պահվածքը հետխորհրդային տարածությունում, որտեղ ամենաթեժ կետը համարվում է Ուկրաինան եւ, հնարավոր է, Վրաստանը: Բելառուսի հարցում Արեւմուտքը քիչ բան կարող է անել. նա լարված ուշադրությամբ հետելում է Ռուսաստանի քաղաքականությանն այս երկրում: Խիստ ազդում են նաեւ այնպիսի միջադեպերը, ինչպիսին է, օրինակ, «զագային պատերազմը»:

*Չարց* - Ամերիկյան ՋԼՄ-ը հաղորդեցին, թե Ռուսաստանի իրավիճակի հանդեպ Վաշինգտոնի մտահոգության արտահայտման ձեւերից մեկը կարող է լինել «տարբեր իրավապաշտպան խմբերի, ժողովրդավարության կողմնակիցների եւ քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հավաքը»: Նման հավաք կարող է կայանալ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում այդ նախաձեռնությանը:

*Պատ.* - Կարծում եմ, որ նմանատիպ ինչ-որ բան անհրաժեշտ է անել, այլապես Ամերիկյան «հիմարի» տեսք կունենա: Ինչպես ես արդեն ասացի, Վաշինգտոնը պետք է որեւէ կերպ աջակցի Ռուսաստանում ժողովրդավարությանը: Հավանաբար, նման հավաք լավ կլինի անցկացնել արտասահմանում, օրինակ՝ նախկին խորհրդային հանրապետություններից որեւէ մեկում: Չե՞ որ Ռուսաստանում միշտ էլ հնարավոր է, ասենք, վկայակոչելով անվտանգությունը՝ վերցնել ու արգելել այդպիսի միջոցառումը: Եվ ոչ ոք չի կարող դրան հակադրվել:

*Չարց* - Սենատոր Ջոն Մակքեյը ԱՄՆ-ին կոչ արեց բոյկոտել Պետերբուրգի գագաթաժողովը: Այն կարո՞ղ է, արդյոք, ձախողվել:

*Պատ.* - Կարծում եմ, որ գագաթաժողովի տապալումը չափազանց քիչ հավանական է: Արդեն շատ ուշ է: Բացի այդ, բոյկոտն այնքան էլ արդյունավետ միջոց չէ: Նշեմ, որ Մակքեյը իրականում կոչ էր անում, որպեսզի նախագահ Բուշը «Մեծ յոթնյակի» իր գործընկերների հետ քննարկի գագաթաժողովի տեղափոխման հնարավորությունը: Եվ սենատորի խոսքը բավականին զգուշավոր էր:

Ողջ «յոթնյակը» Պետերբուրգի հուլիսյան հանդիպման կապակցությամբ իրեն շատ անհարմար է զգում: Միակ լուրջ բանը, ինչի մասին Ռուսաստանը մտադիր է խոսել, էներգետիկ անվտանգությունն է: Ֆրանսիան այս կապակցությամբ պահանջում է այդ թեմայի լուրջ քննարկում եւ Ռուսաստանի կողմից էներգետիկ խարտիայի վավերացում՝ Եվրասիա էներգակիրների հստակ մատակարարումների ապահովման համար: Ինչ վերաբերում է օրակարգի մյուս հարցերին (վարակիչ հիվանդություններ, կրթական խնդիրներ), ապա բանավեճն այստեղ չի խոստանում լինել բովանդակալից: Ստացվում է, որ այդ գագաթաժողովի նպատակը Ռուսաստանում ավտորիտար վարչակարգի հաջողությունների տոնումն է: Վաշինգտոնում հնչում են այսպիսի

զմահատականներ, թե Պետերբուրգի գազաթափողովն ինչ-որ միջին բան է լինելու 1936թ. Բեռլինի օլիմպիական խաղերի եւ 1938թ. Չեխոսլովակիայի վերաբերյալ մյուսխեմյան համաձայնագրի համեմատությամբ:

*Հարց* - Թոմ Լանթոսն ավելի նվազ դիվանագիտորեն հանդես եկավ եւ առաջարկեց Ռուսաստանին ընդհանրապես վճարել «Մեծ ութնյակից»: Ձեր կարծիքով, Ռուսաստանի նման մեկուսացումը կարո՞ղ է արդյունավետ լինել:

*Պատ.* - Կարծում եմ, որ դա տեղի չի ունենա: Դրանք սոսկ խոսքեր են, որոնց իմաստն այն է, որ Ռուսաստանում ժողովրդավարությանը հարկավոր է որեւէ կերպ աջակցել: Սակայն այստեղ հետաքրքիր հարց է ծագում. եթե Ռուսաստանը մտել է զարգացած արդյունաբերությամբ առաջատար ժողովրդավարությունների խմբի մեջ, ընդ որում՝ չհանդիսանալով ժողովրդավարական, ապա ինչո՞ւ այնտեղ չընդգրկել Չինաստանին, Յնդկաստանին, Հարավաֆրիկյան Հանրապետությանը եւ Բրազիլիային: Այս դեպքում խումբն առավել ներկայացուցչական կլինի: Սկզբունքորեն այս չորս պետությունները «Մեծ ութնյակի» նախարարական հանդիպումներում միշտ էլ ներկայացված են: Ենթադրում եմ, որ «Մեծ ութնյակի» ընդարձակման հարցը Սանկտ Պետերբուրգում կդրվի:

*Հարց* - Վերջերս նախագահ Բուշն իր ելույթում հայտարարեց, թե ժողովրդավարական հեղափոխությունները Վրաստանում, Ուկրաինայում, Կիրգիզիայում լուրջ սկիզբն են, եւ ազատության երթն աշխարհում շարունակվելու է: Ո՞րն է լինելու նրա հաջորդ կանգառը՝ Բելառուսը, Ռուսաստանը:

*Պատ.* - Ինչ վերաբերում է Բելառուսում հեղափոխության հեռանկարին՝ ես հոռետես եմ: Նախագահ Լուկաշենկոն բոլոր ոլորտներում վիթխարի վերահսկողություն ունի: Բացի այդ, Բելառուսում չկան ամուր ինքնուրույն ուժեր՝ պատրաստ դիմակայելու իշխանությանը: Արեւմուտքի համար խիստ դժվար է որեւէ բան անել Բելառուսում, որն ամբողջովին կախված է Ռուսաստանի դոտացիաներից: Լուկաշենկոյի ճակատագիրը Պուտինի ձեռքում է, իսկ վերջինս ակնհայտորեն ոչինչ չի ուզում ձեռնարկել Բելառուսի նախագահի դեմ:

*Հարց* - Ձեր կարծիքով, ընտրությունները Բելառուսում եւ

Ուկրաինայում կարող են լրացուցիչ լարվածություն մտցնել Մոսկվայի ու Վաշինգտոնի հարաբերություններում:

*Պատ.* - Դա լիովին հնարավոր է: Կարծում եմ, որ Լուկաշենկոն երբեմն ինքը կարող է այդ լարվածությունը հրահրել: Ի սկզբանե ծրագրված էր, որ ընտրությունները Բելառուսում կանցնեն գրեթե նույն ժամանակ, ինչ եւ Պետերբուրգի զագաթաժողովը (դա Ռուսաստանի համար հավելյալ բարդություններ կառաջացներ): Սակայն հետո ընտրությունները տեղափոխվեցին մարտ: Այդ որոշումն իբր թե կայացրել է ինքը՝ Լուկաշենկոն, առանց Մոսկվայի առերեսույթ ճնշման:

Մոսկվայի ու Վաշինգտոնի մոտ տարածայնություններ կառաջանան նաեւ Ուկրաինայի առիթով: Ակներեւ է, որ երբ խոսքը ընտրությունների մասին է, Արեւմուտքը մի կողմ է բռնում, իսկ Ռուսաստանը՝ հակադիր: Հետաքրքիր է, որ Արեւմուտքի համար այժմ դժվար է ազդել Բելառուսի, իսկ Ռուսաստանի համար՝ Ուկրաինայի վրա:

*Հարց* - Կապիտոլիումում Իրանի հետ համագործակցող երկրների նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու կոչեր հնչեցին: Մասնավորապես, սենատոր Սեն Բրաունբերքը, ի թիվս այդպիսի երկրների, հիշատակեց Ռուսաստանն ու Չինաստանը: Ձեր կարծիքով, Մոսկվայի հանդեպ նման պատժամիջոցներ կկիրառվե՞ն: Ու եթե դա տեղի ունենա, արդյո՞ք այդպիսի զարգացումը չի լինի վերադարձ սառը պատերազմին:

*Պատ.* - Միացյալ Նահանգներն արդեն կոնկրետ ռուսական ձեռնարկությունների նկատմամբ որոշակի պատժամիջոցներ սահմանել է, բայց ես համոզված չեմ, որ այժմ կհաջորդեն ինչ-որ գլոբալ պատժամիջոցներ Ռուսաստանի հանդեպ: Ես, օրինակ, նման միջոցների կողմնակից չեմ եւ գտնում եմ, որ դրանք արդյունավետ չեն ու սովորաբար ունենում են այլ հետեւանքներ, քան ցանկալի կլինեն: Ցավոք, Կոնգրեսը շատ է սիրում տարբեր պատժամիջոցների մասին որոշումներ կայացնել, քանզի դա նրա իշխանությունը ցուցադրելու եղանակ է: Ժողովրդավարների ճամբարում գոյություն ունեն շատ հզոր հովանավորչական լոբբիներ, որոնք կարող են պնդել նմանատիպ կոշտ միջոցների կիրառման կամ չինական արտադրանքի սակագների ավելացման վրա: Ռուսաստանի դեպքում հնարավոր է սահմանափակումներ մտցվեն բարձր տեխնոլոգիաների մատակարարումների վրա, ինչը ժամանակին եղել է:

*Հարց* - Դուք ինչպե՞ս եք գտնում, Կոնգրեսը ե՞րբ կվերացնի Ռուսաստանի նկատմամբ Ջեքսոն-Վենիկի լրացումը\*:

*Պատ.* - Չեմ կարծում, թե դա տեսանելի ապագայում տեղի կունենա, նույնիսկ այն բանից հետո, երբ ձեր երկիրը մտնի Առեւտրի համաշխարհային կազմակերպության մեջ: Հավանական է՝ այդ լրացումը շուտով դադարի գործել Ուկրաինայի համար\*\*:

---

\* Ջեքսոն-Վենիկի լրացումն արգելում է ԱՄՆ լիարժեք առեւտրային հարաբերություններն այն երկրների հետ, որտեղ գոյություն ունեն արտագաղթի ազատության սահմանափակումներ: Խորհրդային Միության հետ առեւտրում խտրականություն դնող սույն լրացումն ընդունվել է 1974թ.՝ ԽՍՀՄ հրեաների ազատ արտագաղթի հանդեպ խորհրդային իշխանության հարուցած խոչընդոտներին ի պատասխան: ԽՍՀՄ փլուզումից հետո Ջեքսոն-Վենիկի լրացումն ինքնաբերաբար տարածվեց նախկին խորհրդային հանրապետությունների վրա ու մինչ օրս վերացված չէ Ռուսաստանի եւ ԱՊՀ մի շարք երկրների հանդեպ - *խմբ.*:

\*\* Վերջերս ԱՄՆ Կոնգրեսը չեղյալ հայտարարեց Ուկրաինայի նկատմամբ Ջեքսոն-Վենիկի լրացումը՝ նրան տրամադրելով լիարժեք առեւտրային գործընկերոջ կարգավիճակ - *խմբ.*:



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Թամարա Վարդանյան</b>	
<b>ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋ</b> .....	<b>1</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ</b>	
<b>ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ</b> .....	<b>5</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>«ՈՒՂԵՂԱՅԻՆ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>10</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b>	
<b>ԿՐԹԱՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՈՒՄ</b> .....	<b>15</b>
<b>Արտակ Շաքարյան</b>	
<b>ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>21</b>
<b>Սուրեն Սարյան</b>	
<b>ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ</b> .....	<b>26</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԻՐԱՔ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ</b> .....	<b>31</b>
<b>Անդերս Օսլունդ</b>	
<b>ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ</b>	
<b>ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b> .....	<b>35</b>

Շապիկի վրա պատկերված է  
**Բերկրիի ջրվեժը** (Վանա լճից հյուսիս-արևելք)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: